Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2839

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԶ. ԲԱՆ.

## ԼԵԶՈՒԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՌՈՒԲԷՆԻ ՔԻՒՐՔՃԵԱՆ

— 1856 —

491.99-5
Մ-22

2010

№ 20024

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
# ՀԱՅԿԱԶՆԵԱՆ
# ԼԵԶՈՒԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
Տ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՀԱՆԱՅ
ՄԱՄԲՐԷԵԱՆ.
ԴԱՍԱՏՈՒ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ
Ս. ՍԱՀԱԿԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ
ՍԱՄԱԹԻՈՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ
ՌՈՒԲԷՆԻ ԹԻՒՐԹՃԵԱՆ
— 1856 —

Printed in Turkey

12017

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱ՛Ն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

**Տ. Տ. ՅԱԿՈՎԲԱՅ**

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ

2907
39

Printed in Turkey

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային դպրոցաց մէջ մայրենի լեզոււոյ ուսմանը պարապող տղայոց՝ գրաւոր աշխատութեամբ Քերականական գիտելեաց ներդաշնութիւնը յառաջ տանելու դիւրութիւննին ջանալով, առաջիկայ համառօտ Քերականութիւնս պատրաստել խորհեցայ, բայց ինչպէս ամեն գործի, ասոր ալ անկատարութիւնը 'ի կատարեալն ժամանելը՝ ժամանակի և հմտագունից աշխատասիրութեանը կարօտ է. վասնորոյ մենկանիս՝ մեղէ առ այս օգնելով պատճառը ցուցանելով անձեռնադէր ժամու վստահութեամբ՝ համարձակ սրտիւ և բազմափորձ դասատուաց ներողամտութեանը

կը դիմեն, միանգամայն և կ'ընդունին նոցին աշխատութիւնը իբր՚ լուսոյ մեր համառօտութեանը ։

Ա. ան չէ ինչպէս յայտնի է, ամէն կանոնաւորեալ դպրոցաց մէջ նախնական կամ նախակրթութեան դասեր կը գտնուին, մեր դպրոցին մէջ ալ (թէ որ ազգին շնորհիւը կանոնաւորելոյ ճաղտին, վիճակակից կ'ընդունուին է) քանի մը նախնական կարգէ դասատուներ գտնուելով, որոնք ինչպէս անուամբ, հաստատ ալ անկատարութեան մէջ ըլլալով, գրագրութեան կողմանէ ալ յաջողակութիւննին պակաս է, նոյնպէս և ուղղագրութիւննին. վասն որոյ և հանապա-

զօրէայ աշխատող՝ ի-ննին անդրոր հա-
լով՝ և սերտողու-թեան ձանձրոյթ գերէ
վարժելով, աշխարհին կը ընանայ, որով
և չէն օգտէր, որովհետ պատրաստ է. այս խոր-
հըրդով փափաքեցայ անոնց դիւրու-թեա-
նը համար, և խրենց հասակին և ընդու-
նակու-թեանը համեմատ սերտողու-թեան
և գաղափարու-թեան նշ-թերը յարմարցնե-
լով, պարզ և դե-րին կերպով կանոնե-
րը ամփոփեցին, գործոյ ակամայ թերու-
թի-ւնները դիտոցէ մեզ խոյրնելու յառաջ,
և սա-ստա-հակակաց վասն այսր անդրեղու-
թեանց աղաւաղու-թի-նն ալ յարգել խու-
տանալով. Բայց և առաջին կանոնաբա-

նութեամբ բարեջան դասատուաց գրգիռ
մը տալու ալ չեմ զանցեր, որ մինչեւ ցայ-
սօր իրենց բազմօրինակ եւ հաստատուն դասա-
տետրները 'ի փառս եւ 'ի շահ օտարին ազ-
գային դպրոցներուն մէջ աշխատասիրեցին,
որովէ մինչեւ ցարդ աւելի շահեցան ազգի
մանկունքը քան տպագրելովէն. այս կ'ա-
ղաչեմ, որ այս մեր համառօտութիւնը ի-
րենց յօժարամիտ աշխատութեանը իբր նա-
խագիծ մը համարելով, կանոնաւոր դասա-
տետրի մը վայելուչ հանձին շնորհելու ազ-
գային դպրոցաց աշակերտելոցը, եւ մեր ան-
կարող հասակի համար աշխատութիւնս կա-
տարելոց աւելով չէ դառնէ։

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԱԲԱՌ լեզուն շիտակ հասկընալու և անսխալ գրելու արհեստն է Քերականութիւնը։

Խօսելու բառեր պէտք է, որ Հայերէն լեզուի մէջ ութ տեսակ է բոլոր խօսքերու մէջ գործածութեան համար. Անուն, Դերանուն, Բայ, Բայանուն, Նախդիր, Մակբայ, Շաղկապ, Ձայնարկութիւն, որ Մասունք բանի ալ կ'ըսվին։

## ԱՆՈՒՆ

Անունը իր մը կամ իրի որպիսութիւն մը կ'իմացընէ, զորօրինակ, հաց, ջուր, սեւ, հին ևայլն. ու երկու տեսակ է, Գոյական ու Ածական։

Գոյական անունը իր մը կ'իմացընէ, զոր օրինակ. հաց, ջուր. ածականը իրին որպիսութիւնը կամ քանի՛ հատ ըլլալը կ'իմացընէ, զորօրինակ սեւ, խոր, հին, տասն, քսան ևայլն։

Գոյական անունը երկու տեսակ է, մէկը Յատուկ, որ մէկ հատի անուն է, զոր

օրինակ Երուսաղէմ, Պետրոս. մէկալը Հա-սարակ, որ մէկի ու շատի կը զուրցուի, զորօ-րինակ եկեղեցի, քար:

Անունը երկու պարագայ ունի, Թիւ, Հոլով:

Թիւը անունին նշանակած բանին մէկ հա-տի համար կամ շատի համար ըլլալը կ'իմա-ցընէ, ու երբ մէկ հատ իմացընէ, Եզակի կ'ըսուի, զորօրինակ Հայ, մարդ, քաղաք. և երբ շատն իմացընէ, Յոգնակի կ'ըսուի. զորօրինակ Հայք:

Հոլովը ինն է, և բառին վրայ ինը տե-սակ մանր փոփոխութիւն կը բերէ. Ուղղա-կան, Սեռական, Տրական, Հայցական, Բացառա-կան, Պատմական, Գործիական, Պարառական, Ներ-գոյական:

Բառերը հոլովելու համար նախդիր ու յանգ ալ կը դնենք, որ աս յանգերը տե-սակ տեսակ են:

Ա. ի է իւ, ից ից իւք.
Բ. ան անէ ամբ, անց անց ամբք.
Գ. ու ուէ ուբ, ուց ուց ուբք.
Դ. ոյ ոյ ով, ոց ոց ովք.
Ե. ու ուէ ու, ուց ուց ուք.
Զ. այ այ աւ, աց աց աւք.
Է. ի է աւ, աց աց աւք.
Ը. ին անէ ամբ, անց անց ամբք.
Թ. ոյ ոյ աւ, ոց ոց աւք.

Սովորական գործածութեան նախդիր-ներն ալ ասոնք են, զ 'ի յ ց առ:

Առաջին յանգի օրինակ:

| Եզակի: | | Յոգնակի: | |
|---|---|---|---|
| Ուղ. Հայ | հայ, | Հայք | հայեր, |
| Սեռ. Հայի | հային, | Հայից | հայերուն, |
| Տր. Հայի | հային, | Հայից | հայերուն, |
| 'ի Հայ | | 'ի Հայս | |
| Հայց. զՀայ | հայը, | զՀայս | հայերը, |
| Բաց. 'ի Հայէ | հայէն, | 'ի Հայից | հայերէն, |
| Պատ. զՀայէ | հային, համար, | զՀայից | հայերուն, համար, |
| Գործ. Հայիւ | հայով, | Հայիւք | հայերով, |
| Պար. զՀայիւ | հային, բոլորը, | զՀայիւք | հայերուն, բոլորտիքը, |
| Ներ. 'ի Հայի | հային մէջ | 'ի Հայս | հայերուն մէջը, |
| 'ի Հայ | | | |

Աս օրինակին վրայ հոլովուող բառեր:

| | | | |
|---|---|---|---|
| Ծայր | ծայր, | Ընծայ | ընծայ |
| Փեսայ | փեսայ, | Ուխտ | ուխտ, |
| Վկայ | վկայ, | Արքայ | թագաւոր. |
| Մարգարէ | մարգարէ. | Այր | մարդ: |

[illegible]

| | | | |
|---|---|---|---|
| Ովսէս | [illegible], | Ողջոյն | [illegible], |
| Հանդէս | [illegible], | Իղձ | [illegible], |
| Մեծ | [illegible], | Ինչ | [illegible], |
| Ճէն | [illegible], | Արոր | [illegible], |

[illegible]

| | | | |
|---|---|---|---|
| Խուց | [illegible], | Օգուտ | [illegible], |
| Խուլ | [illegible], | Ատեան | [illegible], |
| Ոխ | [illegible], | Հրէայ | [illegible], |
| Անախուշտ | [illegible], | Գոմնեայ | [illegible], |

| [illegible] : | | [illegible] : | |
|---|---|---|---|
| Մովսէս, | | Իմ ջուք | [illegible], |
| Սարգիս, | | Գնացք | [illegible]. |
| Գրիգոր, | | Դուք | [illegible], |

[illegible] :

| | | |
|---|---|---|
| Սերմն | [illegible] | Սերմանք |
| Սերման | | Սերմանց |
| Սերման 'ի սերմն | | Սերմանց 'ի սերմանս |
| զՍերմն | | զՍերմանս |
| 'ի Սերմանէ | | 'ի Սերմանց |

| | |
|---|---|
| զՍերմանէ | զՍերմանց |
| Սերմամբ | Սերմամբք |
| զՍերմամբ | զՍերմամբք |
| ՚ի Սերման ՚ի սերմն | ՚ի Սերմանս |

Երկն ալէ, ծնծղանէր,
Աշուն աշնան,
Ձմեռն յՁմեռա,
Ջերղուն առաւէտ,
Մահ մահու,

Պոյտն պորտոյ,
Ըղջիկն աղջէկ,
Նշեամն խաչաղը,
Դուռն դրան,
Շուրթն շրթանց։

Անյոգնականք։

Յուսիկ,
Ռատղէկ,
Գողթն,

Անեզականք։

Իրաւունք հագէ,
Արունք պաշտօն,
Ձգամանք ապրանք,
պատասխանէր։

Երկրորդ օրինակին նման։

| | |
|---|---|
| Տեսիլ | Տեսիլք |
| Տեսլեան | Տեսլեանց |
| Տեսլեան ՚ի տեսիլ | Տեսլեանց ՚ի տեսիլս |
| զՏեսիլ | զՏեսիլս |
| ՚ի Տեսլենէ | ՚ի Տեսլեանց |
| զՏեսլենէ | զՏեսլեանց |
| Տեսլեամբ | Տեսլեամբք |
| զՏեսլեամբ | զՏեսլեամբք |
| ՚ի Տեսլեան ՚ի տեսիլ | ՚ի Տեսիլս |

զԱնգեղը　　　　զԱնգեղբք
'ի Անգեղ 'ի շինող　　'ի Անգեղս

Կոճղ　քիւթիւք,　　Դուստր　աղջիկ.
Ոսկր　ոսկոր,　　Ալեւր　ալիւր,
Կայսր　թագաւոր,　　Եղջիւր　պոյնուզ:

Չորրորդ յանգի օրինակ:

Անիւ　թէքէրլէք,　　Անիւք
Անուայ　　　　Անուոց
Անուայ յանիւ　　Անուոց յանիւս;
զԱնիւ　　　　զԱնիւս
յԱնուայ　　　　յԱնուոց
զԱնուայ　　　　զԱնուոց
Անուով　　　　Անուովք
զԱնուով　　　　զԱնուովք
յԱնիւ　　　　յԱնիւս

Ծունր　ճէրճէյար,　　Հուր　հուր.
Ուս　օմուզ,　　Աղբեայ　տասաւր,
Սափոր　դէսթի,　　Վերին　վէրէ,
Թիւ　համրանք,　　Մեղու　արը,
Պատիւ　էնդէֆ,　　Անկողին　եաթագ:

Անեղական:　　Անյոգնական:

Անուրջք　երազ,　　Թաթուլ,
Դիք　չաստուած,　　Հեթում:
Կուռք　չաստուած:

| | |
|---|---|
| զԸնգեղը | զԸնգեղըք |
| 'ի Ընգեղ 'ի շինգղ | 'ի Ընգեղս |

| | | | |
|---|---|---|---|
| Կոճղ | կոճղակ, | Դուստր | աղջիկ, |
| Ոսկր | ոսկոր, | Ալիւր | ալիւր, |
| Կայսր | թագաւոր, | Եղջիւր | պոյնուզ։ |

Զօրաւոր յանգի օրինակ։

| | | |
|---|---|---|
| Անիւ | թէքէրլէք, | Անիւք |
| Անուոյ | | Անուոց |
| Անուոյ յանիւ | | Անուոց յանիւս ; |
| զԱնիւ | | զԱնիւս |
| յԱնուոյ | | յԱնուոց |
| զԱնուոյ | | զԱնուոց |
| Անուով | | Անուովք |
| զԱնուով | | զԱնուովք |
| յԱնիւ | | յԱնիւս |

| | | | |
|---|---|---|---|
| Ծներ | էլմէկյար, | Հուր | հուր. |
| Ուս | օմուզ, | Անդեայ | տարլա, |
| Սափոր | տէսթի, | Վերին | վէրէ, |
| Թիւ | համրանք, | Մեաւ | օտա, |
| Պատիւ | իզզէթ, | Ընկոյզն | ճէվիզ։ |

| | | |
|---|---|---|
| Անեզականք։ | | Անյոգնականք։ |
| Անուրջք | երազ, | Թաթուլ, |
| Դիք | չաստուած, | Հեթում։ |
| Կուռք | չաստուած։ | |

Հինգերորդ յանգի օրինակ ։

| | |
|---|---|
| Զարդ զարդարանք , | Զարդք |
| Զարդու | Զարդուց |
| Զարդու 'ի զարդ | Զարդուց 'ի զարդս |
| զԶարդ | զԶարդս |
| 'ի Զարդուէ | 'ի Զարդուց |
| զԶարդուէ | զԶարդուց |
| Զարդու | Զարդուք |
| զԶարդու | զԶարդուք |
| 'ի Զարդու 'ի զարդ | 'ի Զարդս ։ |

| | | | |
|---|---|---|---|
| Նախանձ | նախանձոտութեան , | Շէն | գեղ , |
| Սպաս | խորշէմ , | Քէն | զարդող , |
| Գանձ | խաղէնէ , | Խնձ | գունփղան , |
| Աղուէս | նեղէ , | Յուլ | դողդոջ ։ |
| Սրէժ | էօծ , | | |

Անեղանի ։ Ընդօրինակի ։

| | |
|---|---|
| Բոլք խաչէ օծան , | Ղուկաս , |
| Գարտք պարզոր , | Աբրահամ ։ |
| Սարք հորսուէն , | |

Հինգերորդ յանգի նման օրինակ։

| | |
|---|---|
| փոքր պզտիկ, | փոքունց |
| փոքու | փոքունց |
| փոքու 'ի փոքր | փոքունց 'ի փոքունս |
| զփոքր | զփոքունս |
| 'ի փոքուէ | 'ի փոքունց |
| զփոքուէ | զփոքունց |
| փոքու | փոքումբք |
| զփոքու | զփոքումբք |
| 'ի փոքու 'ի փոքր ՚ | 'ի փոքունս ։ |

Ծաղր չէկէ, Բարձր եղջերուք,
Թանձր գոնը։ Սրէց չորքոտանի,
Մանր ոսկոր, Յոգն յոգունք շատ։

Վեցերորդ յանգի օրինակ։

Տիգրան
Տիգրանայ
Տիգրանայ առ տիգրան
զՏիգրան
'ի Տիգրանայ
զՏիգրանայ
Տիգրանաւ
զՏիգրանաւ
'ի Տիգրան

Հարկ — Անահիտ
Մարիամ. — Տիգրանուհի
Մին — Նոայի
Տիմոթէոս — Ագրիպպաս:

[illegible]

Բժիշկ [illegible], — Բժիշկք ;
Բժշկի — Բժշկաց
Բժշկի առ բժիշկ — Բժշկաց առ բժիշկս
զԲժիշկ — զԲժիշկս
'ի Բժշկէ — 'ի Բժշկաց
զԲժշկէ — զԲժշկաց
զԲժշկաւ — Բժշկօք
Բժշկաւ — զԲժշկօք
'ի Բժշկի 'ի բժիշկ — 'ի Բժիշկս

Լեզու [illegible], — Թակոյկ [illegible],
Հովիւ [illegible], — Ահեակ [illegible],
Պետ , [illegible], — Աղմուկ [illegible],
Վարագոյր [illegible], — Տիկ [illegible],

[illegible] — [illegible]

Կեանք — Հայաստան :
Աչք
Գամիրք

### Ութերորդ յանգի օրինակ ։

| | |
|---|---|
| Մասն կտոր, | Մասունք |
| Մասին | Մասանց |
| Մասին 'ի մասն | Մասանց 'ի մասունս |
| զՄասն | զՄասունս |
| 'ի Մասնէ | 'ի Մասանց |
| զՄասնէ | զՄասանց |
| Մասամբ | Մասամբք |
| զՄասամբ | զՄասամբք |
| զՄասին 'ի մասն | 'ի Մասունս |

| | | | |
|---|---|---|---|
| Ընձն | ընձ, | Հարսն | հարս, |
| Կուշն | գաւլ, | Ձեռն | ձեռք, |
| Բեռն | բեռ, | Ոտն | ոտք, |
| Լեառն | լեռ, | Թուռն | ճիրան ։ |

### Իններորդ յանգի օրինակ ։

| | |
|---|---|
| Հերձի [illegible]. | Հերձիք |
| Հերձւոյ | Հերձեաց |
| Հերձւոյ 'ի հերձի | Հերձեաց 'ի հերձիս |
| զՀերձի | զՀերձիս |
| 'ի Հերձւոյ | 'ի Հերձեաց |
| զՀերձւոյ | զՀերձեաց |
| Հերձեաւ | Հերձեօք |
| զՀերձեաւ | զՀերձեօք |
| 'ի Հերձւոջ 'ի հերձի | 'ի Հերձիս ։ |

Եկեղեցի եկեղեցէ, Սնոտի պօշ բան,
Ասղանի դերջան, Լեղի չօր,
Կարասի էշեա, Այգի էգի,
Որդի որդէ, Բարի աղէկ,
Հոգի հոգէ, Տեղի տեղ,

Արտաւղէ հոլով:

Այր էրէկ մարդ, Արք
Առն Արանց
Առն առ այր Արանց առ արս
զԱյր զԱրս
յԱռնէ յԱրանց
զԱռնէ զԱրանց
Արամբ Արամբք
զԱրամբ զԱրամբք
յԱռն յայր յԱրս:

Երկայր էրկա ան- գամ կար- գած չէն, Քաղաքատէր քա- ղաքին տէրը,
Տէր տղա, Պարտատէր պար-
Տանուտէր տանուտէր, տըքան:

| | |
|---|---|
| Հայր | Հարք |
| Հօր | Հարց |
| Հօր առ հայր | Հարց առ հարս |
| զՀայր | զՀարս |
| 'ի Հօրէ | 'ի Հարց |
| զՀօրէ | զՀարց |
| Հարբ | Հարբք |
| զՀարբ | զՀարբք |
| 'ի Հօր 'ի հայր | 'ի Հարս |

| | |
|---|---|
| ՚Նախահայր , | Վանահայր , |
| Տիրամայր , | Մայր , |
| Եղբայր , | Հօրեղբայր ․ |

| | |
|---|---|
| Քոյր | Քորք |
| Քեռ | Քերց |
| Քեռ առ քոյր | Քերց առ քորս |
| զՔոյր | զՔորս |
| 'ի Քեռէ | 'ի Քերց |
| զՔեռէ | զՔերց |
| Քերբ | Քերբք |
| զՔերբ | զՔերբք |
| 'ի Քեռ 'ի քոյր | 'ի Քորս ․ |

Հօրաքոյր , Մօրաքոյր ։

| | |
|---|---|
| կին | կանայք |
| կնոջ | կանանց |
| կնոջ առ կին | կանանց առ կանայս |
| զկին | զկանայս |
| 'ի կնոջէ | 'ի կանանց |
| զկնոջէ | զկանանց |
| կանամբ | կանամբք |
| զկանամբ | զկանամբք |
| 'ի կնոջ 'ի կին | 'ի կանայս ։ |

| | |
|---|---|
| Ընդակին, | Տիկին [1] ։ |
| Միակին, | |

| | |
|---|---|
| Գիւղ | Գիւղք ! |
| Գեղջ | Գիւղից |
| Գեղջ 'ի գիւղ , | Գիւղից 'ի գիւղս |
| զԳիւղ | զԳիւղս |
| 'ի Գեղջէ | 'ի Գիւղից |
| զԳեղջէ | զԳիւղից |
| Գիւղիւ | Գիւղիւք |
| զԳիւղիւ | զԳիւղիւք |
| 'ի Գեղջ 'ի գիւղ | 'ի Գիւղս ։ |

| | |
|---|---|
| Նորագիւղ , | Միջագիւղ ։ |
| Զորագիւղ , | |

1 Ասիկայ օրինակէն քիչ մը տարբեր կը հոլովի այսպէս. տիկնոջ, տիկնամբ, տիկնայք, տիկնանց, տիկնամբք։

| | |
|---|---|
| Օր | Աւուրք |
| Աւուր | Աւուրց |
| Աւուր յօր ։ | յԱւուրս |
| զՕր | զԱւուրս |
| յՕրէ | յԱւուրց |
| զՕրէ | զԱւուրց |
| Աւուրբ | Աւուրբք |
| զԱւուրբ | զԱւուրբք |
| յԱւուր յօր | յԱւուրս ։ |

Երկայնօր , Հասարակօր ։
Կէսօր ,

## ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆ

| | |
|---|---|
| Մի | Երկու |
| Միոյ միոջ | Երկուց |
| Միում առ մի | Երկուց առ երկուս |
| զՄի | զԵրկուս |
| 'ի Միոյ 'ի միոջէ | յԵրկուց |
| զՄիոյ զմիոջէ | զԵրկուց , |
| Միով | Երկոքումբք |
| զՄիով | զԵրկոքումբք |
| 'ի Միում 'ի մի | յԵրկուս ։ |

Երեք, Չորք } Ա. յոգնակի
Հինգ, Վեց } Ա.
Եօթն Բ.
Ութ, Ինն, Տասն } Ա.

Քսան, Երեսուն, Քառասուն, Յիսուն, Վաթսուն, Եօթանասուն, Ութսուն, Իննսուն } Ա.

Մետասան, Երկոտասան, Երեքտասան, Չորեքտասան, Հնգետասան, Վեշտասան } Ա.

Հարիւր Գ.
Հազար Ե.
Բիւր Ե.
Առաջին Գ.

Եօթն և տասն, Ութ և տասն, Ինն և տասն } Բ.

Երկրորդ, Չորրորդ, Երրորդ } Ե.

Երկոքեան, Երկոքին, — երկուքն ալ,
Երկոցուն, Երկոցունց. — երկուքին ալ,
Երկոցուն, առ երկոսեան — երկուքէն ալ,
զԵրկոսեան, զերկոսին, — երկուքն ալ :

| | |
|---|---|
| յԵրկոցունց | երկուքէն ալ, |
| զԵրկոցունց | երկուքին համար ալ, |
| Երկոքումբք | երկուքով ալ, |
| զԵրկոքումբք | երկուքին քովն ալ, |
| յԵրկոսեան յերկոսին | երկուքին մէջն ալ: |
| Ամենքեան, | Բոլորեքեան: |

## ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆ ՄԱՍՆԱԿԱՆ

| | |
|---|---|
| Ոմն Դէմ., | Ոմանք |
| Ուրումն | Ոմանց |
| Ումեմն առ ումն | Ոմանց առ ոմանս |
| զՈմն | զՈմանս |
| յՈւմեմնէ | յՈմանց |
| զՈւմեմնէ | զՈմանց |
| Ոմամբ | Ոմամբք |
| զՈմամբ | զՈմամբք |
| յՈւմեմն յումն | յՈմանս: |

| | |
|---|---|
| Ոք Դէմ., | Ոմանց |
| Ուրուք | Ոմանց |
| Ումեք յոք | Ոմանց առ ոմանս |
| զՈք | զՈմանս |
| յՈւմեքէ | յՈմանց |
| զՈւմեքէ | զՈմանց |
| Ոմամբ | Ոմամբք |
| զՈմամբ | զՈմամբք |
| յՈւմեք յոք | յՈմանս: |

| | | | |
|---|---|---|---|
| Իւրաքանչիւր<br>Միւս | Գ. | Ամ<br>Ընձնիւր | Գ. |
| Քանի՛ | Թ. | | |

Իմն իք, ինչ, մը,
Իրիք
Իմեմն, իմիք, մինչ
Իմն
յԻմեմնէ, յիմեքէ
զԻմեմնէ, զիմեքէ ;
Իւիք
զԻւիք
յԻմեմն յիմիք յինչ ։

զԻ՞,    ի՞նչ, չէ՞, ;
Ի՞ր
Ի՞մ, հի՞մ, է՛րում, մի՞նչ
զԻ՞
առ ՚ի Մէ՞ ;
զՄէ՞
Ի՞ւ
զԻ՞ւ
յԻ՞մ, յի՞նչ ։

| | | |
|---|---|---|
| Ո՞ր | -՞ր, | Որք |
| Որոյ | | Որոց |
| Որում առ որ | | Որոց առ որս |
| զՈր | | զՈրս |

| | |
|---|---|
| յՈրմէ , յորոյ | յՈրոց |
| զՈրմէ , զորոյ | զՈրոց |
| Որով | Որովք |
| զՈրով | զՈրովք |
| յՈրում , յոր | յՈրս |
| Ո՞, ո՞վ, ո՞ն, | Ոյք |
| Ոյր | Ոյց |
| Ում, առ ո՞, յո՞, ցո՞ | Ոյց , ցոյս առ ոյս |
| զՈ , զով | զՈյս |
| յՈւմէ | յՈյց |
| զՈւմէ | զՈյց |
| Որով: | Որովք |
| զՈրով | զՈրովք |
| յՈւմ , յո՞: | յՈյս: |

Զուանէ:

| | |
|---|---|
| Միմեանց մէկմէկու , | Իրերաց իրարու , |
| Միմեանց առ միմեանս | Իրերաց առ իրեարս |
| զՄիմեանս | զԻրեարս |
| ՚ի Միմեանց | յԻրերաց |
| զՄիմեանց | զԻրերաց |
| Միմեամբք | Իրերօք |
| զՄիմեամբք | զԻրերօք |
| ՚ի Միմեանս | յԻրեարս: |

| | | |
|---|---|---|
| Հանուր | ամէն, | Հանուրք |
| Հանրոյ | | Հանրոց |
| Հանրոյ 'ի Հանուր | | Հանրոց 'ի Հանուրս |
| զՀանուր | | զՀանուրս |
| 'ի Հանրոյ | | 'ի Հանրոց |
| զՀանրոյ | | զՀանրոց |
| Հանրով | | Հանուրբք |
| զՀանրով | | զՀանուրբք |
| 'ի Հանրի 'ի Հանուր | | 'ի Հանուրս |

ԴԵՐԱՆՈՒՆ

Անունի տեղ դրուող բառերուն Դերանուն կ'ըսվի, և չորս տեսակ է, Գոյական, Ածական, Ստացական և Յարաբերող ։

Գոյական Դերանուն ասոնք են, Ես, Դու, Ինքն, Իւր; Մեք․ Դուք, Նոքա, որ իրի և անձի տեղ կը դրվին, և Գոյականի պէս որոշ ու յայտնի նշանակութիւն ունին ։

Ածական Դերանուն ասոնք են, Այս, Այդ, Այն, Սոյն, Դոյն, Նոյն, որ Գոյականի վրայ կը դրվին զատական նշանակութեամբ ։

Ստացական Դերանուն կ'ըսվին՝ Իմ, Քո․ Մեր, Ձեր, Իւր․ Նորա, Դորա, Սորա․ Նոցա, Դոցա, Սոցա․ Քոյին, Իւրոյին, Դերանունները, որ անունին ունեցածին տեղը կը դրվին ․

Յարաբերող Դերանուն կ'ըսվի Որ Դերանունը, որ իր անունը մէկ տեղ կը բանի խօսքի մէջ։

Երեք պարագայ ունի Դերանունը, Դէմք, Թիւ, Հոլով։

Դէմքը կ'որոշէ Դերանուններն, որ անուան տեղ դրված ըլլալը, թէ որ խօսողին տեղ դրված է. Ա. դէմք կ'ըսվի, որ Ես, Դերանունն է, դիմացի մտիկ ընողին տեղ դրված է նէ. Բ. դէմք կ'ըսվի, որ Դու Դերանունն է, երբոր խօսողէն ու լսողէն դուրս մէկու մը տեղ դրված է. Գ. դէմք կ'ըսվի, որ բոլոր Դերանուններն են Ես, Դու Դերանուններէն զատ։

Դէմք ցուցունելու համար երեք գիր ալ կայ, ս, դ, ն, որ բառերու ծայրը կը դըրվին, և դէմք յայտնելով կ'որոշեն։

Դերանունի թիւը անուան պէս երկու է, երբ մէկի համար գուրցըլվի. Եզակի է. ու երբ շատի համար զուրցըլվի, Յոգնակի է։

Հոլովը անուան պէս ինն է։

| | | | |
|---|---|---|---|
| Ես | Ես, | Մեք | Մենք, |
| Իմ | Իմին, | Մեր | Մերին, |
| Ինձ առ իս | Ինծի, | Մեզ առ մեզ | Մեզի, |
| զԻս | Իս, | զՄեզ | Մեզ. |

| | | | |
|---|---|---|---|
| յԻնէն | ինձմէ, | 'ի Մէնջ | մեզմէ, |
| զԻնէն | ինծի հա-մար, | զՄէնջ | մեզի հա-մար, |
| Ինև | ինծմով, | Մեօք | մեզմով, |
| զԻնև | իմ բոլոր-տիքս, | զՄեօք | մեր բո-լորտիքը, |
| յԻս | իմ վրաս, | 'ի Մեզ | մեր մէ-ջը: |
| Դու | դուն, | Դուք | դուք, |
| Քո | քուկին, | Ձեր | ձերին, |
| Քեզ առ քեզ | քեզի, | Ձեզ առ ձեզ | ձեզի, |
| զՔեզ | քեզ, | զՁեզ | ձեզ, |
| 'ի Քէն | քենէ, | 'ի Ձէնջ | ձենէ, |
| զՔէն | քեզի հա-մար, | զՁէնջ | ձեզի համար, |
| Քև | քեզմով, | Ձեօք | ձեզմով, |
| զՔև | քու բո-լորտիքդ, | զՁեօք | ձեր բո-լորը, |
| 'ի Քեզ | քու վրադ, | 'ի Ձեզ | ձեր մէջը: |
| Ինքն | ինք, | Ինքեանք | իրենք, |
| Ինքեան | | Ինքեանց | |
| Ինքեան առ ինքն | | Ինքեանց առ ին-քեանս | |
| զԻնքն | | զԻնքեանս | |
| յԻնքենէ | | յԻնքեանց | |

| | |
|---|---|
| զԻնքենէ | զԻնքեանց |
| Ինքեամբ | Ինքեամբք |
| զԻնքեամբ | զԻնքեամբք |
| յԻնքեան յինքն | յԻնքեանս ։ |
| Չունի | Իւրեանք |
| Իւր, իւրեան | Իւրեանց |
| Իւրեան առ իւր | Իւրեանց առ իւրեանս |
| Չունի | զԻւրեանս |
| յԻւրմէ | յԻւրեանց |
| զԻւրմէ | զԻւրեանց |
| Իւրև իւրեամբ | Իւրեամբք |
| զԻւրև զիւրեամբ | զԻւրեամբք |
| յԻւր յիւրեան | յԻւրեանս ։ |

Սա, Դա, Նա ։

| | |
|---|---|
| Սա | Սոքա |
| Սորա | Սոցա |
| Սմա առ սա | Սոցա առ սոսա |
| զՍա | զՍոսա |
| 'ի Սմանէ | 'ի Սոցանէ |
| զՍմանէ | զՍոցանէ |
| Սովաւ | Սոքօք |
| զՍովաւ | զՍոքօք |
| 'ի Սմա 'ի սա | 'ի Սոսա |

## Այս, Այդ, Այն.

| | |
|---|---|
| Այդ | Այդք այդոքիկ |
| Այդր այդորիկ | Այդց այդոցիկ |
| Այդմ այդմիկ | Այդց այդոցիկ առ |
| առ այդ | այդոսիկ |
| զԱյդ | զԱյդս զայդոսիկ |
| յԱյդմանէ | յԱյդց յայդցանէ |
| զԱյդմանէ | զԱյդց զայդցանէ |
| Այդու այդուիկ | Այդոքիւք |
| զԱյդու զայդուիկ | զԱյդոքիւք |
| յԱյդմ յայդմիկ յայդ | յԱյդս յայդոսիկ: |

## Սոյն, Դոյն, Նոյն:

| | |
|---|---|
| Սոյն | Սոյնք նոքին |
| Սորին նորուն | Սոցին նոցուն |
| Սմին առ նոյն | Սոցին առ նոսին |
| զՍոյն | զՍոյնս զնոսին |
| | 'ի Սոցունց |
| | զՍոցուց |
| Սովին նովիմբ | Սոքիմբք նոքումբք |
| զՍովին զնովիմբ | զՍոքիմբք զնոքումբք |
| 'ի Սմին 'ի նոյն | 'ի Սոյնս 'ի նոսին: |

| | |
|---|---|
| Քոյ | Քոյք |
| Քոյոյ | Քոյոց |
| Քոյում առ քոյ | Քոյոց առ քոյս |
| զՔոյ | զՔոյս |
| ՚ի Քումմէ ՚ի քոյոյ | ՚ի Քոյոց |
| զՔումմէ զքոյոյ | զՔոյոց |
| Քոյով | Քոյովք |
| զՔոյով | զՔոյովք |
| ՚ի Քոյում ՚ի քոյ | ՚ի Քոյս ։ |

## Որ ։

| | |
|---|---|
| Որ ո, | Որք ոյք |
| Որոյ ոյր | Որոց ոյց |
| Որում ում առ որ | Որոց ոյց առ որս |
| զՈր | զՈրս զոյս |
| յՈրմէ յորոյ | յՈրոց յոյց |
| զՈրմէ զորոյ | զՈրոց զոյց |
| Որով | Որովք |
| զՈրով | զՈրովք |
| յՈրում յում յոր | յՈրս յոյս ։ |

Քո :

| | |
|---|---|
| Քո | Քոյք |
| Քոյ | Քոց |
| Քում առ քո | Քոց առ քոյս |
| զՔո | զՔոյս |
| 'ի Քումմէ 'ի քոյ | 'ի Քոց |
| զՔումմէ զ քոյ | զՔոց |
| Քով | Քովք |
| զՔով | զՔովք |
| 'ի Քում 'ի քո | 'ի Քոյս , |

Իմ :

| | |
|---|---|
| Իմ | Իմք |
| Իմոյ | Իմոց |
| Իմում առ իմ | Իմոց առ իմս |
| զԻմ | զԻմս |
| յԻմմէ | յԻմոց |
| զԻմմէ | զԻմոց |
| Իմով | Իմովք |
| զԻմով | զԻմովք |
| յԻմում յիմ | յԻմս : |

Մեր , Ձեր , Իւր . Սորա , Դորա , Նորա . Սոցա , Դոցա , Նոցա դերանուններն ալ Իմին պէս կը հոլովին :

## ԲԱՅ

Բայ կ՚ըսուի ան բառը, որ գործողութիւն մը կընշանակէ ժամանակի, դէմքի ու թիւի տակ:

Այս գործողութիւնը չորս տեսակ որոշուած է իրենց գործողութեան կերպէն. Ներգործական, Կրաւորական, Չէզոք և Լծական:

Ներգործականը գործը ուրիշ մէկու մը վրայ ըլլալ կը ցուցունէ, զոր օրինակ ատեմ, տամ, կարդամ ևայլն:

Կրաւորականը գործը ուրիշէ մը ըլլըվիլ կը նշանակէ, զոր օրինակ ծեծվիլ, կոտրվիլ, կտրվիլ:

Չէզոքը գործը ինքիրեն ընել կամ ինքիրեն ըլըվիլ կը նշանակէ, զոր օրինակ երթալ, փախնալ, մեռնիլ, ելնալ.

Լծականը ինքիրեն բան մը ըլլա՚լ կը նշանակէ, և աս չորսն է, եմ, գամ, եղանիմ, լինիմ:

Հինգ պարագայ ունի բայը, Ժամանակ, Եղանակ, Թիւ, Դէմք, Խոնարհում:

Ժամանակ կ՚ըսուի, երբոր բային վրայ ժամանակի միտքեր կ՚երևան, և երեք է, Ներկայ, Անցեալ, Ապառնի:

Գործողութիւնը ըսած ատենդ կ՚ըլլայ

կորի պէս ցուցունէ նէ, ներկայ ժամանակ կ'ըսվի. ուտեմ, նստիս, երթայ:

Գործողութեան վրայէն ժամանակ անցած ցուցունէ նէ, անցեալ ժամանակ կ'ըսվի, երթայի, կերայ, շինեցաւ:

Գործը գալու ժամանակի մէջ ըլլալիք ցուցունէ նէ, ապառնի կ'ըսվի, երթայց, տաց, եկեսցէ:

Անցեալը երկուք է, մէկմը անցեալ անկատար, որ գործին վրայէն ժամանակ անցեր է, բայց գործը չի լըմընցած ըլլալը կը ցուցունէ, զոր օրինակ երթայի:

Մէկ մըն ալ անցեալ կատարեալ, որ գործը լըմընցած ըլլալը կ'իմացընէ, զոր օրինակ կերայ:

Եղանակ կ'ըսվի խօսվածքին կերպերուն, և երեք է, սահմանական, հրամայական, և ստորադասական:

Սահմանականը՝ գործը պատմելու ձևով կ'իմացընէ, զոր օրինակ երթամ, ննջէի, հանգեայց:

Հրամայականը գործը ընելու կամ չընելու ստիպմամբ մը կ'իմացընէ, կե՛ր, մի՛ ուտեր:

Ստորադասականը գործը խավը ընելու ձևով կ'իմացընէ, նստիցեմ, խաղայցեմ:

Դէմքը գործողութեան տէրը կ'իմացը-

նէ, թէ որ խօսողն ըլլայ նէ, առաջին դէմք կ՚ըսվի. Թէ որ դիմացինն ըլլայ նէ, երկրորդ դէմք կ՚ըսվի, թէ որ երկուքէն զատ ուրիշն ըլլայ նէ, երրորդ դէմք կ՚ըսվի։

Թիւը գործին տէրը մէկ կամ մէկէն աւելի ըլլալը կը ցուցունէ, թէ որ մէկ է, եզակի կ՚ըսվի, թէ որ մէկէն աւելի է, յոգնակի կ՚ըսվի։

Բային կերպ կերպ փոխուելուն խոնարհմունք կ՚ըսվի. և խոնարհելու կերպին համեմատ իրեն ծայրը նշաններ ունի, որոնց լծորդ կ՚ըսենք, և ան նշաններով կը ճանչնանք բային խոնարհվելուն կերպերը։

Աս նշաններուն խոնարհման կերպը ասանկ է։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լծորդ | Ներ. | Ընկ. | Կատ. | Ապառ. | Հրա. | Ստոր։ |
| | եմ, | էի, | եցի, | եցից. | ե՛, | էցեմ, |
| | ամ, | այի, | ացի, | ացից, | ա՛, | ացեմ, |
| | ում, | ուի, | է, | էց, | | ուցում, |
| | իմ, | էի, | եցայ, | եցայց, | ե՛ց, | էցեմ։ |

Բայց որչափ որ աս նշանները ասանկ կը խոնարհին, և ասոնք պարզ խոնարհման կերպ կը ճանչնանք նէ, կը գտնուին անանկ բայեր, որ աս նշանով ուրիշ կերպ կը խո-

նարհին, որոնց խառն խոնարհման կերպ կ'ըսենք . 'որոնք սերտողութեան մէջ կը տեսնանք ։

## ՊԱՐԶ ԽՈՆԱՐՀՄԱՆ
## ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

### Սահմանական եղանակի ներկայ ։

Եզակի ։

Մաքրեմ, մաքրես, մաքրէ,
Կը Թէմըզլըցընեմ ։

Յոգնակի ։

Մաքրեմք, մաքրէք, մաքրեն ։

Անկատար ։

Մաքրէի, մաքրէիր, մաքրէր,
Կը Թէմըզլըցընէի ։
Մաքրէաք, մաքրէիք, մաքրէին ։

Կատարեալ ։

Մաքրեցի, մաքրեցեր, մաքրեաց,
Թէմըզլըցուցի,
Մաքրեցաք, մաքրեցիք, մաքրեցին ։

Ապառնի :

Մաքրեցից , մաքրեսցես , մաքրեսցէ ,
Թուեմըղ ցըղնեմ :
Մաքրեսցուք , մաքրեսջիք , մաքրեսցեն :

Հրամայական եղանակի ներկայ :

Մաքրեա՛, մաքրեսջի՛ր՝ մի՛ մաքրեր ,
Թուեմըղ ցո՛ւ :
Մաքրեցէ՛ք մի՛ մաքրէք :

Ստորադասական եղանակի ապառնի :

Մաքրիցեմ , մաքրիցես , մաքրիցէ ,
Թուեմըղ ցանեմ նէ :
Մաքրիցեմք , մաքրիցէք , մաքրիցեն :

Ներգործական : Չէզոք :

Գրեմ կը գրեմ, Դիմեմ կը վազեմ,
Կարեմ կը կարեմ, Ժամանեմ կը հասնեմ,
Վանեմ կը հըռանդեմ, Անչեմ կը մոմըռամ,
Սերմանեմ կը ցանեմ: Թագաւորեմ Թագաւոր կ'ըլլամ:

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ ։

Ամամ, ամաս, ամայ,
Կը սիրեմ։
Ամամք, ամայք, աման ։

Անկատար ։

Ամայի, ամայիր, ամայր ։
Կը սիրէի ։
Ամայաք ամայիք, ամային ։

Կատարեալ ։

Ամացի, ամացեր, ամաց,
Սիրեցի ։
Ամացաք, ամացիք, ամացին ։

Ապառնի ։

Ամացից, ամասցես, ամասցէ,
Սիրեմ ։
Ամասցուք, ամասջիք, ամասցեն ։]

Հրամայական եղանակի ներկայ ։

Ամա՛, ամասջի՛ր մի՛ ամար,
Սիրէ ։
Ամացէք մի՛ ամայք ։

Ստորադասական եղանակի ապառնի :

Ամայցեմ, ամայցես, ամայցէ,
Վորթեմ նէ :
Ամայցեմք, ամայցէք, ամայցեն :

| | |
|---|---|
| Ներգործական : | Չէզոք : |
| Կարդամ, | Գնամ, |
| Լուանամ, | Խաղամ, |
| Լամ : | Տօկամ : |

## ԵՐՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ :

Զենում, զենուս, զենու,
Կը մորթեմ :
Զենումք, զենուք, զենուն,

Անկատար :

Զենուի, զենուիր, զենոյր,
Կը մորթէի :
Զենուաք, զենուիք, զենուին :

Կատարեալ :

Զենի, զեներ, եզեն, զեն՝,
Մորթեցի :
Զենաք, զենիք, զենին :

Ապառնի։

Զենից, զենցես, զենցէ,
Սորբեմ։
Զենցուք, զենջիք, զենցեն։

Հրամայական եղանակի ներկայ։

Զե՛ն, զենջի՛ր մի՛ զենուր,
Սորբէ,
Զենէ՛ք մի՛ զենուք։

Ստորադասական եղանակի ապառնի։

Զենուցում, զենուցուս, զենուցու,
Սորբեմ նէ,
Զենուցումք, զենուցուք, զենուցուն։

Աներգործական։

Թաղում կը թաղեմ,
Հեղում կը թափեմ,
Կիզում կ'երեմ,
Յաւելում, կ'ավելցնեմ,
Խնում կը գոցեմ,
Լնում, կը լնեմ։

## ՉՈՐՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Սահմանական եղանակի ներկայ։

Սիրիմ, սիրիս, սիրի,
Կը սիրուիմ։
Սիրիմք, սիրիք, սիրին։

### Անկատար։

Սիրէի, սիրէիր, սիրէր,
Կը սիրուէի։
Սիրէաք, սիրէիք, սիրէին։

### Կատարեալ։

Սիրեցայ, սիրեցար, սիրեցաւ։
Սիրուեցայ։
Սիրեցաք սիրեցայք սիրեցան։

### Ըղձական։

Սիրեցայց, սիրեսցիս, սիրեսցի,
Սիրուիմ։
Սիրեսցուք, սիրեսջիք, սիրեսցին։

### Հրամայական եղանակի ներկայ։

Սիրեաց, սիրեսջի՛ր, մի՛ սիրիր։
Սիրեցարուք, մի՛ սիրիք։

Ստորադասական եղանակի ապառնի :

Սիրեցիմ, սիրեցիս, սիրեցի,
Սիրելիմ նէ :
Սիրեցիմք, սիրեցիք, սիրեցին :

| Կրաւորական | Չէզոք |
| --- | --- |
| Կարիմ, | Աշխատիմ, |
| Լինիմ, | Երևիմ, |
| Սերմանիմ : | Յիմարիմ, |
| | Բերկրիմ : |

Կան անանկ խոնարհման կերպեր, որ իրենց ծայրի նշաններուն համեմատ խոնարհում չեն ունենար վերի օրինակներուն վրայ, այլ իր նշանովը ուրիշ նշանի վրայ կը խոնարհի, և ասով պարզ օրինակներէն կը տարբերի, ու կ՚ըլլայ խառն խոնարհում, բայց գիտցի՛ր որ աս տարբերութիւնը կատարեալ ապառնի և հրամայականի մէջ կըլլայ. և ահա

ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ :

Տեսանեմ, տեսանես, տեսանէ,
Տեսանեմք, տեսանէք, տեսանեն :

Ընչաւոր ։

Տեսանէի ,    տեսանէիր ,    տեսանէր ,
Տեսանէաք ,    տեսանէիք ,    տեսանէին ։

Կատարեալ ։

Տեսի ,    տեսեր ,    ետես ,
Տեսաք ,    տեսիք ,    տեսին ։

Ապառնի ։

Տեսից ,    տեսցես ,    տեսցէ ,
Տեսցուք ,    տեսջիք ,    տեսցեն ։

Հրամայական եղանակի ներկայ ։

Տե՛ս ,    տեսջի՛ր    մի՛ տեսաներ ,
Տեսէ՛ք    մի՛ տեսանէք ։

Ստորադասական եղանակի ապառնի ։

Տեսանիցեմ , տեսանիցես , տեսանիցէ ,
Տեսանիցեմք , տեսանիցէք , տեսանիցեն ։

Ներգործական ;    Չէզոք ։

Ընծանեմ ,    Համբերեմ ։
Արկանեմ ,

Գտանեմ,
Դիզանեմ,
Ցուցանեմ,
Հարցանեմ,
Ապանանեմ,
Ածեմ,
Բերեմ,
Հանեմ,
Հեղուսեմ:

## ՄԻՒՍ ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ:

Դարձուցանեմ, դարձուցանես,
դարձուցանէ,
Դարձուցանեմք, դարձուցանէք,
դարձուցանեն:

Անկատար:

Դարձուցանէի, դարձուցանէիր,
դարձուցանէր,
Դարձուցանէաք, դարձուցանէիք,
դարձուցանէին:

Կատարեալ:

Դարձուցի, դարձուցեր, դարձոյց,
Դարձուցաք, դարձուցէք,
դարձուցին,

Ապառնի :

Դարձուցից, դարձուսցես,
դարձուսցէ,
Դարձուսցուք, դարձուսջիք,
դարձուսցեն :

Հրամայական եղանակի ներկայ :

Դարձո՛, դարձուսջի՛ր
մի՛ դարձուցաներ,
Դարձուցէ՛ք, մի՛ դարձուցանէք :

Ստորադասական եղանակի ապառնի :

Դարձուցանիցեմ, դարձուցանիցես,
դարձուցանիցէ,
Դարձուցանիցեմք, դարձուցանիցէք,
դարձուցանիցեն :

՝Ներգործական :
Ամրացուցանեմ,
Զեկուցանեմ,
Մատուցանեմ,
Կորուսանեմ,
Փլուզանեմ :

## ՄԻՒՍ ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ:

Ասեմ, ասես, ասէ,
Ասեմք, ասէք, ասեն:

Անկատար:

Ասէի, ասէիր, ասէր,
Ասէաք, ասէիք, ասէին:

Կատարեալ:

Ասացի, ասացեր, ասաց,
Ասացաք, ասացիք, ասացին:

Ապառնի:

Ասացից, ասասցես, ասասցէ,
Ասասցուք, ասասջիք, ասասցեն:

Հրամայական եղանակի ներկայ:

Ասա՛, ասասջիր, մի՛ ասեր,
Ասացէք մի՛ ասէք:

Ստորադասական եղանակի ապառնի:

Ասիցեմ, ասիցես, ասիցէ,
Ասիցեմք, ասիցէք, ասիցեն:

Ներգործական ։ Չեզոք ․

Գրտեմ ։ Կարեմ ,
Մարթեմ ։

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ ․

Խոստանամ , խոստանաս , խոստանայ ,
Խոստանամք , խոստանայք , խոստանան ։

Անկատար ։

Խոստանայի , խոստանայիր , խոստանայր ,
Խոստանայաք , խոստանայիք , խոստանային ։

Կատարեալ ։

Խոստացայ , խոստացար , խոստացաւ ։
Խոստացաք , խոստացայք խոստացան ։

Ապառնի ։

Խոստացայց , խոստասցիս , խոստասցի ,
Խոստասցուք , խոստասջիք , խոստասցին ։

Հրամայական եղանակի ներկայ ։

Խոստացի՛ր  խոստասջի՛ր մի՛ խոստանար
Խոստացարուք  մի՛ խոստանայք ։

Ստորադասական եղանակի ապառնի ։

Խոստանայցեմ, խոստանայցես,
խոստանայցէ ․
Խոստանայցեմք, խոստանայցէք,
խոստանայցեն ։

| Ներգործական ․ | Չեզոք ։ |
|---|---|
| Իմանամ, | Գոհանամ, |
| Մարգարէանամ, | Ընթանամ |
| Մոռանամ, | Ողջամ, |
| Ստանամ, | Յուսամ, |
| Օգամ, | Ցնծամ, |
| Ուսամ, | Արբենամ, |
| | Յագենամ, |
| | Քաղցենամ ։ |

ԱՅԼ ՕՐԻՆԱԿ

Սահմանական եղանակի ներկայ ։

Կեամ, կեաս, կեայ ․
Կեամք ․ կեայք, կեան ․

### Անցեալ անկատար ։

Կէի, կէիր, կեայր ․
Կէաք, կէիք, կէին ։

### Անցեալ կատարեալ ։

Կեցի, կեցեր, եկեաց ․
Կեցաք, կեցիք, կեցին ։

### Ապառնի ։

Կեցից, կեցցես, կեցցէ ․
Կեցցուք, կեցջիք, կեցցեն ։

### Հրամայական եղանակի ներկայ ։

Կեաց, կեցջի՛ր մի՛ կեար ․
Կեցէք, մի՛ կեայք ։

### Ստորադասական եղանակի ապառնի ։

Կեցցեմ, կեցցես, կեցցէ ․
Կեցցեմք, կեցցէք, կեցցեն ։

Ուտեմ, ուէմ, նուէմ, անեմ վերջով չէզոք բայերն ալ զատ խոնարհման կերպ ունին ։

Սահմանական եղանակի ներկայ:

փախնում, փախնուս, փախնու.
փախնումք, փախնուք, փախնուն:

Անցեալ անկատար:

փախնուի, փախնուիր, փախնոյր.
փախնուաք, փախնուիք, փախնուին:

Անցեալ կատարեալ:

փախեայ, փախեար, փախեաւ.
փախեաք, փախեայք, փախեան:

Ապառնի:

փախեայց, փախիցես, փախիցէ.
փախիցուք, փախիջիք, փախիցեն:

Հրամայական եղանակի ներկայ:

փախի՛ր, փախիջի՛ր մի՛ փախնուր.
փախերո՛ւք, մի՛ փախնուք:

Ստորադասական եղանակի ապառնի:

փախնուցում, փախնուցուս, փախնուցու:
փախնուցումք, փախնուցուք, փախնուցուն:

Չեզոք .

Թագնում,
Ցածնում,
Հանգչիմ,
Կորնչիմ,
Յանցանեմ.
Զարթնում,
Քաղցնում,
Երկնչիմ,
Յարնչիմ,

## ՉՈՐՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ ·

### Սահմանական եղանակի ներկայ :

Հատանիմ, հատանիս, հատանի .
Հատանիմք, հատանիք, հատանին :

### Անցեալ անկատար :

Հատանէի, հատանէիր, հատանէր .
Հատանէաք, հատանէիք, հատանէին :

### Անցեալ կատարեալ :

Հատայ, հատար, հատաւ .
Հատաք, հատայք . հատան :

### Ապառնի :

Հատայց, հատցես, հատցէ .
Հատցուք, հատջիք, հատցին :

### Հրամայական եղանակի ներկայ։

Հատի՛ր, հատջի՛ր մի՛ հատանի՛ր.
Հատարո՛ւք, մի՛ հատանիք։

### Ստորադասական եղանակի ապառնի։

Հատանիցիմ, հատանիցիս հատանիցի.
Հատանիցիմք, հատանիցիք, հատանիցին։

Որչափ ներգործական բայեր կան, բոլորն ալ կրաւորական պէտք է որ ունենան. բայց եմ պարզ նշանով եղած ներգործականները սիրեմ պարզ խոնարհման վրայ կը խոնարհին. ամ, ում նշանով եղածները հատանեմ խառն խոնարհման վրայ կը խոնարհին. իմ նշանով եղած բայերը աս երկու օրինակներէն մէկուն վրայ կը խոնարհին, բայց նշանակութիւննին ներգործական և կրաւորական ըլլալով՝ առանց խոնարհումնին փոխելու կ՚ըսուին Հասարակ բայ։

| Կրաւորական | Հասարակ | Չէզոք |
|---|---|---|
| Տեսանիմ, | Եգանիմ, | Մեռանիմ, |
| Եծիմ, | Ուսանիմ, | Հեծանիմ, |
| Ցուցանիմ, | Սկսանիմ, | Նստիմ, |
| Ներիմ, | Ծնանիմ, | Մեղանչեմ, |

| | | |
|---|---|---|
| Ճանիմ, | Տանիմ: | Երդուիմ, |
| Ճեղուսիմ: | | Յենում, |
| | | Զգենում: |

Այս երկու տեսակ այսինքն պարզ խառն խոնարհման օրինակներէն զատ բայեր կան, որ իրենց նշանին համեմատ երբեք խոնարհում չունին, այլ կէս մը պարզ կէս մը խառն կը խոնարհին, և ընդհանուր օրինակի վրայ չեն խոնարհիր:

Կան անանկ բայեր ալ, որ իրենց դըլխուն իրենց համար զատ խոնարհման կերպ ունին առանց կանոնաւոր օրինակի, և կ'ըսուին Անկանոն:

Սահմանական եղանակի ներկայ:

| | | |
|---|---|---|
| Առնեմ, | առնես, | առնէ. |
| Առնեմք, | առնէք, | առնեն: |

Անցեալ անկատար:

| | | |
|---|---|---|
| Առնէի, | առնէիր, | առնէր. |
| Առնէաք, | առնէիք, | առնէին: |

Անցեալ կատարեալ:

| | | |
|---|---|---|
| Արարի, | արարեր, | արար. |
| Արարաք, | արարիք, | արարին: |

### Ապառնի ։

Արարից, արասցես, արասցէ.
Արասցուք, արասջիք, արասցեն ։

### Հրամայական եղանակի ներկայ ։

Արա՛, արասջի՛ր մի՛ առներ ։
Արարէք, մի՛ առնէք ։

### Ստորադասական եղանակի ապառնի ։

Առնիցեմ, առնիցես, առնիցէ.
Առնիցեմք, առնիցէք, առնիցեն ։

---

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

### Սահմանական եղանակի ներկայ ։

Առնիմ, առնիս, առնի.
Առնիմք, առնիք, առնին ։

### Անցեալ անկատար ։

Առնէի, առնէիր, առնէր.
Առնէաք, առնէիք, առնէին ։

### Անցեալ կատարեալ ։

Արարայ, արարար, արարաւ.
Արարաք, արարայք, արարան ։

### Ապառնի ։

| | | |
|---|---|---|
| Արարայց, | արասցես, | արասցէ · |
| Արասցուք, | արասջիք, | արասցեն ։ |

### Հրամայական եղանակի ներկայ ։

| | |
|---|---|
| Առնիջի՛ր, | մի՛ առնիր · |
| Առնիջի՛ք, | մի՛ առնիք ։ |

### Ստորադասական եղանակի ապառնի ։

| | | |
|---|---|---|
| Առնիցիմ, | առնիցիս, | առնիցի · |
| Առնիցիմք, | առնիցիք, | առնիցեն ։ |

---

### Սահմանական եղանակի ներկայ ։

| | | |
|---|---|---|
| Գնեմ, | գնես, | գնէ · |
| Գնեմք, | գնէք, | գնեն ։ |

### Անցեալ անկատար ։

| | | |
|---|---|---|
| Գնէի, | գնէիր, | գնէր · |
| Գնէաք, | գնէիք, | գնէին ։ |

### Անցեալ կատարեալ.

Եդի, եդեր, եդ.
Եդաք, եդիք, եդին:

### Ըղձական:

Դից, դիցես, դիցէ.
Դիցուք, դիջիք, դիցեն:

### Հրամայական եղանակի ներկայ.

Դիր, դիջի՛ր մի՛ դներ.
Դիք, մի՛ դնէք:

### Ստորադասական եղանակի ապառնի:

Դնիցեմ, դնիցես, դնիցէ.
Դնիցեմք, դնիցէք, դնիցեն:

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

### Սահմանական եղանակի ներկայ:

Դնիմ, դնիս, դնի.
Դնիմք, դնիք, դնին:

### Անցեալ անկատար:

Դնէի, դնէիր, դնէր.
Դնէաք, դնէիք, դնէին:

Անցեալ կատարեալ:

Եդայ, եդար, եդաւ.
Եդաք, եդայք, եդան:

Ապառնի:

Եդայց, դիցիս, դիցի.
Դիցուք, դիջիք, դիցեն:

Հրամայական եղանակի ներկայ:

Եդիր, մի՛ դնիր,
Եդարուք, մի՛ դնիք:

Ստորադասական եղանակի ապառնի:

Դնիցիմ, դնիցիս, դնիցի.
Դնիցիմք, դնիցիք, դնիցեն:

Սահմանական եղանակի ներկայ:

Լսեմ, լսես, լսէ.
Լսեմք, լսէք, լսեն:

Անցեալ անկատար:

Լսէի, լսէիր, լսէր.
Լսէաք, լսէիք, լսէին.

Անցեալ կատարեալ:

| | | |
|---|---|---|
| Լուայ, | լուար, | լուաւ. |
| Լուաք, | լուայք, | լուան. |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Լուայց: | լուիցես, | լուիցէ. |
| Լուիցուք, | լուիջիք, | լուիցեն. |

Հրամայական եղանակի ներկայ:

| | | |
|---|---|---|
| Լո՛ւր, | լուիջի՛ր | մի՛ լսեր. |
| Լուարո՛ւք, | | մի՛ լսէք: |

Ստորադասական եղանակի ապառնի:

| | | |
|---|---|---|
| Լսիցեմ, | լսիցես, | լսից. |
| Լսիցեմք, | լսիցէք, | լսիցեն: |

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

Սահմանական եղանակի ներկայ:

| | | |
|---|---|---|
| Լուեալ լինիմ, | լուեալ լինիս, | լուեալ լինի. |
| Լուեալ լինիմք, | լուեալ լինիք. | լուեալ լինին: |

### Անցեալ անկատար։

Լուեալ լինէի, լուեալ լինէիր, լուեալ լինէր·
Լուեալ լինէաք, լուեալ լինէիք, լուեալ լինէին։

### Անցեալ կատարեալ։

Լուեալ եղէ, լուեալ եղեր, լուեալ եղեւ·
Լուեալ եղաք, լուեալ եղէք, լուեալ եղեն։

### Ապառնի։

Լուեալ եղէց, լուեալ եղիցիս, լուեալ եղիցի·
Լուեալ եղիցուք, լուեալ եղիջիք, լուեալ եղիցին։

### Հրամայական եղանակ ներկայ։

Լուեալ լեր, մի՛ լուեալ լինիր·
Լուեալ լերուք, մի՛ լուեալ լինիք։

### Ստորադասական եղանակ ապառնի։

Լուեալ լինիցիմ, լուեալ լինիցիս, լուեալ լինիցի·
Լուեալ լինիցիմք, լուեալ լինիցիք լուեալ լինիցին։

Սահմանական եղանակի ներկայ:

Ճանաչեմ, ճանաչես, ճանաչէ.
Ճանաչեմք, ճանաչէք, ճանաչեն:

Անցեալ անկատար:

Ճանաչէի, ճանաչէիր, ճանաչէր.
Ճանաչէաք, ճանաչէիք, ճանաչէին:

Անցեալ կատարեալ:

Ծանեայ, ծանեար, ծանեաւ.
Ծանեաք, ծանեայք, ծանեան:

Ապառնի:

Ծանեայց, ծանիցես, ծանիցէ.
Ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն.

Հրամայական եղանակի ներկայ:

Ծանի՛ր, ծանիջիր մի՛ ճանաչեր.
Ծաներո՛ւք, մի՛ ճանաչէք:

Ստորադասական եղանակի ապառնի:

Ճանաչիցեմ, ճանաչիցես, ճանաչիցէ.
Ճանաչիցեմք, ճանաչիցէք, ճանաչիցեն:

Սահմանական եղանակի ներկայ:

Յառնեմ, յառնես, յառնէ.
Յառնեմք, յառնէք, յառնեն:

Անցեալ անկատար:

Յառնէի, յառնէիր, յառնէր.
Յառնէաք, յառնէիք, յառնէին:

Անցեալ կատարեալ:

Յարեայ, յարեար, յարեաւ.
Յարեաք, յարեայք, յարեան:

Ապառնի:

Յարեայց, յարիցես, յարիցէ.
Յարիցուք, յարիջիք, յարիցեն:

Հրամայական եղանակի ներկայ:

Արի, մի՛ յառներ.
Արիք, մի՛ յառնէք:

Ստորադասական եղանակի ապառնի:

Յառնիցեմ, յառնիցես, յառնիցէ.
Յառնիցեմք, յառնիցէք, յառնիցեն:

Սահմանական եղանակի ներկայ ։

Հարկանեմ, հարկանես, հարկանէ․
Հարկանեմք, հարկանէք, հարկանեն ։

Անցեալ անկատար ։

Հարկանէի, հարկանէիր, հարկանէր․
Հարկանէաք, հարկանէիք, հարկանէին ։

Անցեալ կատարեալ ։

Հարի, հարեր, եհար․
Հարաք հարիք, հարին ։

Ապառնի ։

Հարից, հարցես, հարցէ․
Հարցուք, հարջիք, հարցեն ։

Հրամայական եղանակի ներկայ ։

Հա՛ր, հարջի՛ր մի՛ հարկաներ․
Հարէք, մի՛ հարկանէք ։

Ստորադասական եղանակի ապառնի ։

Հարկանիցեմ, հարկանիցես, հարկանիցէ․
Հարկանիցեմք, հարկանիցէք, հարկանիցեն ։

### Սահմանական եղանակի ներկայ։

| | | |
|---|---|---|
| Տամ, | տաս, | տայ. |
| Տամք, | տայք, | տան։ |

### Անցեալ անկատար։

| | | |
|---|---|---|
| Տայի, | տայիր, | տայր։ |
| Տայաք, | տայիք, | տային։ |

### Անցեալ կատարեալ։

| | | |
|---|---|---|
| Ետու, | ետուր, | ետ. |
| Տուաք, | ետուք, | ետուն։ |

### Ապառնի։

| | | |
|---|---|---|
| Տաց, | տացես, | տացէ. |
| Տացուք, | տաջիք, | տացեն։ |

### Հրամայական եղանակի ներկայ։

| | | |
|---|---|---|
| Տո՛ւր, | տաջի՛ր | մի՛ տար. |
| Տո՛ւք, | | մի՛ տայք։ |

### Ստորադասական եղանակի ապառնի։

| | | |
|---|---|---|
| Տայցեմ, | տայցես, | տայցէ. |
| Տայցեմք, | տայցէք, | տայցեն։ |

Սահմանական եղանակի ներկայ։

| | | |
|---|---|---|
| Բառնամ, | Դառնամ, | Ընթեռնում։ |

Անցեալ անկատար։

| | | |
|---|---|---|
| Բառնայի, | Դառնայի, | Ընթեռնուի։ |

Անցեալ կատարեալ։

| | | |
|---|---|---|
| Բարձի, | Դարձայ, | Ընթերցայ, |

Ապառնի։

| | | |
|---|---|---|
| Բարձից, | Դարձայց, | Ընթերցայց։ |

Հրամայական եղանակի ներկայ։

| | | |
|---|---|---|
| Բա՛րձ, | Դարձի՛ր, | Ընթերցի՛ր։ |
| Բարձջի՛ր, | Դարձջի՛ր, | Ընթերցջի՛ր։ |
| Մի՛ բառնար, | Մի՛ դառնար, | Մի՛ ընթեռնուր։ |
| Բարձէք, | Դարձարո՛ւք, | Ընթերցարո՛ւք։ |

Ստորադասական եղանակի ապառնի։

| | | |
|---|---|---|
| Բառնայցեմ, | Դառնայցեմ, | Ընթեռնուցում։ |

Սահմանական եղանակի ներկայ․

Ուտեմ, Ըմպեմ, Երթամ․

Անցեալ անկատար․

Ուտէի, Ըմպէի, Երթայի՞։

Անցեալ կատարեալ։

Կերայ, Արբի, Չոգայ․

Ապառնի․

Կերայց, Արբից, Երթայց։

Հրամայական եղանակի ներկայ․

Կե՛ր, Ա՛րբ, Ե՛րթ։
Կերիջի՛ր, Արբջի՛ր, Երթիջի՛ր։
Մի՛ կերիջիր, Մի՛ արբջիր, Մի՛ երթիջիր։
Կերա՛յք, Արբէք, Երթայք։

Ստորադասական եղանակի ապառնի։

Ուտիցեմ, Ըմպիցեմ, Երթայցեմ։

Սահմանական եղանակի ներկայ․

Գամ, Եղանիմ, Լինիմ,

Անցեալ անկատար։

Գայի, Եղանէի, Լինէի․

Անցեալ կատարեալ :

Եկի, Եղէ, . . .

Ըղձական :

Եկից, Եղէց, Լիցիմ :

Հրամայական եղանակ ներկայ :

Եկ, Եղի՛ր, Լե՛ր :
Եկեսջի՛ր, Եղիջի՛ր, Լիջի՛ր :
Մի՛ գար, Մի՛ եղանիր, Մի՛ լինիր :
Եկա՛յք, Եղերո՛ւք, Լերո՛ւք :

Ստորադասական եղանակ ապառնի :

Գայցեմ, Եղանիցիմ, Լինիցիմ :

---

Սահմանական եղանակ ներկայ :

Եմ, Գոմ, Ունիմ : . . .

Անցեալ անկատար :

Էի, Գոյի, Ունէի : . . .

Անցեալ կատարեալ :

. . . . . . Կալայ : . . .

### Եղանակ:

. . . . Կալայծ, Գոգջիր:

Հրամայական եղանակի ներկայ:

| | | |
|---|---|---|
| Դո՛ւ, | . . . | Կա՛լ, Գո՛գ: |
| Նա, | . . . | Կալջի՛ր, Գոգջի՛ր: |
| Դո՛ւք, | . . . | Մի՛ ունիր, Գոգէք: |
| . . . | . . . | Կալարուք, Գոգջի՛ք: |

Ստորադասական եղանակի ապառնի:

Իցեմ, Գուցեմ, Ունիցիմ: . . .

Ընդունիմ, } Ասոնք Ունիմ բային վե-
Վերընդունիմ, } րայ կը խոնարհին:

## ԲԱՅԱՆՈՒՆ

Բայանուն կ'ըսուին այն բառերը, որ բայի պէս գործողութիւն, և անուան պէս հոլով ունեցող բառեր են, և այս նշանները ունին ել, ալ, ուլ, իլ, եալ, ոց: Բայի պէս գործողութիւն նշանակելու ատեննին բայի չորս տեսակն ալ ունին. անուան պէս վարուած ատեննին թիւ հոլով կ'առնեն, ածական գոյական կ'ըլլան: Ինչ. ել, սիրել, վեր-

Ջացող առաջին տեսակը միշտ գոյական կը վարուի. նոյն երկրորդ տեսակը և ըստ երրորդ տեսակը ածական կը վարուին. զորօրինակ՝ Երթալ, Բաշխել, Խօսել, Երևիլ: Եկեալ, Գալոց.

## ՆԱԽԴԻՐ

Նախդիրը անուանի և դերանուանի հետ գրուող նշաններ են, որ անոնց հոլովը կը շինեն և հոլովներու կ՚ըսուին, որ են զ, 'ի, յ, ց, առ, ընդ, ըստ.

Ուրիշ մը նախդիր ալ կայ, որ հոլովաւոր կ՚ըսուի. ասոնք նշանակութիւն ունին, բայց իրենց հետ ուրիշ բառ մ՚ալ կ՚ուզեն անուն կամ դերանուն, որ անոր հետ մէկ տեղ խօսքին մէջ միտք մը կամ պարագայ մը կիմացընեն, ասոնց այլևայլ հոլովուած բառը հետևեալ կերպով իմացիր.

Ուղղական հոլով առաջ.

Զու, } Համար.
առ 'ի, }
առ, Վրան:

ընդ, ամէնը մէջէն
ըստ, փըրան ․

## Սեռական հոլով առնող ․

վասն, }
սակս, }
'ի սակս, }
'ի պէտս, } համար, իչին ։
յաղագս, }
ընդ․ }
ըստ, }

առանց, առնց ․
առաջի, առջեւը ․
'ի վերայ, վրան ․
զհետ, } ետեւէն ․
զկնի, }
ընդ, տեղը ․
ընթեր, } քովը ․
առընթեր, }
'ի ձեռն, ձեռքովը ․
յանդիման, } դիմացը ․
հանդէպ, }
յետոյ, ետքէն ․
արտաքս, } դուրսը ․
արտաքոյ, }
'ի ներքս, ներսը ․

| | | |
|---|---|---|
| փոխան, | | |
| փոխանակ, | } | տեղը: |
| փոխարէն, | | |
| յայսկոյս, | | ասդին: |
| յայնկոյս, | | անդին: |

Սեռականի պահանջեն:

| | | |
|---|---|---|
| Առ, | | Առջև: |
| ընդ, | | հետը: |
| ըստ, | | պէս: |
| մինչ, | } | ինչուան: |
| մինչև, | | |
| ըստ, | | դուրս: |
| կողմն, | } | Նայած: |
| կոյս, | | |
| մօտ, | | |
| մերձ, | } | մօտիկ: |
| հուպ, | | |

Վերջահոլով պահանջեն:

| | |
|---|---|
| Առ, | Քովը: |
| ընդ, | հետը: |
| ըստ, | պէս: |

պէս գունակ նման:

Հայցական հոլով:

| | | |
|---|---|---|
| Իբր, | | |
| իբրև, | } | Պէս: |
| իբրու, | | |
| որպէս, | | |

դեր քան, գերազանց։
'ի վերոյ քան, վեր։
քան, աւել։
յառաջ քան, նախ քան, } առաջ։

Բացառականի հոլով։

Առ, առ 'ի, } համար։
ընդ ընկերաք,
ըստ եղանակ։
բաց, բայց, } դուրս, առանց։
հետէ, սկսէ։
գաղտ, գաղտնի, ծածուկ, զանխուլ, } ծածուկ։
մեկուսի, 'ի բացեայ, } դուրս, հեռու։

Գործիականի հոլով։

Առ, մօտ, կողմերը։
առ, ատենը։
առ, ժամանակները։
առ, վրայ։
ընդ, տակը։

չափ , ինչուան ։
յետոյ , ետքը ։
յառաջ , առաջ ։

Պարառական նախդիր մ'ունինք ։

Շուրջ ,
շուրջանակի , } Չորսդիքը ։

Ասոնցմէ զատ կան ուրիշ նախդիրներ, որ գրաբարէն կրնանք իմանալ ։

## ՄԱԿԲԱՅ

### Ինչ է Մակբայը ։

Մակբայը բային պարագաները կը ցուցընէ, այսինքն տեղը՝ ժամանակը՝ եղանակը՝ ինչպէսը՝ եայլն, ու չեն հոլովուիր ։

| | | | |
|---|---|---|---|
| Ահա , | Իշտէ ։ | Աստ , | հոս ։ |
| այժմ , | հիմայ ։ | դեռ , | տակաւ ։ |
| ամէն , | էրտու ։ | մի , | մի՛ ։ |
| այո , | ոչէմ ։ | քեզէն , | ենտրիէրենտ ։ |
| ուշ , | ուշ ։ | հեռի , | հեռու ։ |
| անդէն , | հիմն ։ | միթէ , | մէյէր ։ |
| անդր , | հոն ։ | երբեմն , | ատեն մը ։ |
| այսր , | ասդին ։ | երբեք , | ատեն մը ։ |
| արդ , | հիմայ ։ | բնաւին ։ | ալ-նին ։ |
| վերստին , | նորէն ։ | վաղ , | նէզ ։ |

— ,  տաղտ չէ · անագան, ուշ ·
նոյնժամայն անտաղանկը · անշուշտ, երա ·
երագ, շուտով · զարդի, հիմայ ·
Հայերէն, երմենիճէ · գրեթէ, }
այսօր ատ օր · գոգ, } ուեգե րէ ·
յորժամ, երբ որ · գոգջիր, }
ընդունայն, նաֆիլէ · առիմէ, } ինչու ·
այգուց, առաւօտեան զամ, }
ուրեք, տեղ մը · ընդէ՞ր ինչո՞ւ ·
տակաւին, դահա · այնուհետև, անկէ ետքը ·
գիշերի, գիշերով · քանիսն, ժանէ անգամ ·
ձեզէն, ինքնիրեննուտ · աստուածաբար, աս-
[տուծոյ պէս ·
տարապարտ, փուտահանոց · միասանգամ, բէւ-
[րաբ ·
լու 'ի լու, եշիտալէ · բաց 'ի բացէ, հե-
[ռուէ հեռու ·
ևս քան զևս, եվելով · որպէս զի, ինչ-
[պէս որ ·
միայն, մինակ · երամ երամ, խում-
[բէն խումբէն ·
հետզհետէ, ետևէ ետև · յօշ յօշ, կտոր
[կտոր ·
օր ըստ օրէ, օրէ օր, սակայ սակայ ·
[թիք թիք ·
Նոյնքան, այնքան · ամի ամի, տա-
[րին տարին ·

յայնժամ, — ան ատեն.
յերեկն, — երէկ.
յեւանդն, — երէկ չէ մէկալ օր.
դարձեալ, — նորէն:

# ՇԱՂԿԱՊ

## Ինչ է Շաղկապը:

Շաղկապ կ'ըսուին այն բառերը, որ երկու բառ կամ երկու կտոր խօսք իրարու կը կապեն:

| | | | |
|---|---|---|---|
| Եւ, ու, | Ու. | վասն զի, քանզի, | չիւնքի. |
| թէ, եթէ, | էյէրէ ու. | և զի, որովհետև, | չիւնքի, |
| ապա, ապա ուրեմն, | անանկ է նէ. | գոնէ, գոնեայ, | պարի. |
| արդ, և արդ, իսկ արդ, | հիմակ, էյ. | բայց, սակայն, | լաքին. |
| թէպէտ, թէպէտև, | [illegible]. | բա, բամ, | +է. |
| | | տի, | իւլէ. |
| կամ, և կամ, | եախօտ. | թէ, եթէ, | +է. |

քա՛ն, } նէ էէ։
քա՛ն թէ,

որպէս թէ, } կէօյա։
իբր թէ,

---

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Խօսքի Միջարկութիւնը․

Մարդուս կիրքը իմացընող ձայներուն Միջարկութիւն կ'ըսուի․

ա՜ ա՜, Եահա․ հա՛ հա՛, հայտէ․
ա՛ ա՛ա՛, Վայ․ ՚Հ, ախ վախ․
աղէ՜, } տէլէնտէ հայտէ, վա՜հ, ֆէհ ֆէհ․
օ՜ն, օ՜շ, տէշէ․

այ, Հէյ․ աւա՜ղ, }
այն, տըրէ․ ափսո՜ս, } մեղք․
ո՜, ոֆ․ եղո՜ւկ, }
է՜, ը՛․ վա՜յ․ վայ,
համայ, հայտէ, երանի․ էյնէ․

ՎԱԽՃԱՆ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ
# ՄԱՍԱՆՑ ԽՕՍԻ

## Ի՞նչ է Համաձայնութիւնը։

*Մասունք բանիններուն խօսք մը շինելու համար իրարու քով կարգաւ դրուելնուն Համաձայնութիւն կ'ըսուի։*

*Ո՞ր մասն բանից որո՞ց հետ կը կապուի, և ի՞նչ պաշտօն կ'ունենայ։*

*Համաձայնութեան կանոնները տալէ չորս հոլովական մասն բանիններուն վրայ ըլլալով, պէտք է գիտնալ, որ այս չորսը այսինքն Անունը՝ Դերանունը՝ Բայը և Բայանունը իրարու հետ կը կապուին, և զատ զատ պաշտօն կ'ունենան. Անունը՝ Դերանունը և Բայանունը իրարու հետ կապուելով, ածական, յատկացուցիչ, բացայայտիչ խնդիր կ'ըլլան, մէկ մ'ալ բային հետ կապուելով տէր բայի՝ սեռի խնդիր՝ և բնութեան խնդիր կ'ըլլան։*

Ինչ է Տէր բային, և բային հետ ինչպէս պէտք է համաձայնիլ.

Բայ մը իր գործողութեան տեսակին համեմատ իր քովը կ'ուզէ այն գործին տէրը. թէ որ ներգործական է՝ ընողը, թէ որ կրաւորական է՝ ըլլըվողը, չէզոք է նէ, ընողը կամ ըլլըվողը. թէ որ էական է՝ եղողը. և ահա աս բառերուն կ'ըսուի Տէր բայի կամ Անուն բայի. և ամեն դիմաւոր բային Տէր բային պէտք է, որ ուղղական հոլովով բային հետ դէմքը թիւը համաձայն ըլլայ. բայց անուններէն ալ տէր բայի տրուած ժամանակը անունները մինակ երրորդ դէմք ունենալով, առաջին և երկրորդ դէմք բայի հետ դիմորոշով կը համաձայնին, զոր օրինակ՝

Ես ոչ խնդրեմ զփառս իմ։
Մեք գիտեմք։
Ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած։
Երկիր ինքնին բերէ զպտուղ։
Այր զրկի 'ի ճառագայթից արեգական։
Լոյս լուսնին խաւարեցաւ։
Ո՞վ վատ ոչ ամաչէ։
Նա ասէ տէր ցՍամուէլ։
Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծա-
խէջ բառնայ զոստս պտղալիցս։ Լաց։
փող յորդորէ զզօրս 'ի պատերազմ։

Բան խիստ յարուցանէ զբարկութիւն մեծ :
Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր :
Մեռար անմահդ :

Երբ որ անուն բային քանի մը եզակի անուն ըլլայ նէ, բայց սովորաբար յոգնակի կը դրուի, զոր օրինակ՝

Յուդայ և Եփրեմ օրհնեցան 'ի Յակոբայ:
Մտին առաջի Փարաւօնի Մովսէս և Ահարոն:
Գինի և արբեցութի ապականեն զիմաստունս .
Հայր և հոգի սուրբ ոչ զգեցան զմարմին :

Երբեմն ալ եզակի կը դրուի, զոր օրինակ՝

Նոյ և տուն իւր ապրեցաւ 'ի ջրհեղեղէ :
Տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ
հուր և ծծումբ,
Եկն Ագրիպպաս և Բերինիկէ:
Հարաւ ցորեանն և հաճար և գարի :

Զայնը եզակի և նշանակութիւնը յոգնակի եղող բառերը՝ ազգ, ժողովուրդ, խումբ, բանակ, հօտ, և այլն, Թուական անունները՝ հինգ, տասն, քսան, և այլն : Այն անունները՝ որ վրանին յոգնակի նշանակութեամբ ածական ունին, երբ որ տէր բայի ըլլան, բայց երբեմն յոգնակի կը դրուի, զոր օրինակ՝

Հինգն յիմարք էին :
Ընկան 'ի նոցանէ երեսուն հազար :

Գունդն Հայոց անցանէին։
Տիրեցին աշխարհին Հայոց ազգն Սասանայ։
Պատահեցան նմա տասն այր։
Անդ[illegible]էին երկոտասան աղբիւր։
Լի են փառք նորա յամենայն երկիր։

Երբեմն ալ եզակի կը դրուի բայը՝ զոր օրինակ՝

Ամենայն մարդ զլան ցանկայ։
Վտանգեցաւ ազգ քրիստոնէից։
Պատուեսցէ իւրաքանչիւր զընկեր իւր։

Անեզակի անունները տէր բայի ըլլան նէ, բայը երբեմն եզակի երբեմն ալ յոգնակի կրնայ դրուիլ, զոր օրինակ՝

Անցցեն կեանք մեր։
Մեղքն բաժանեն զմարդ յԱստուծոյ։
Յայտնի երևէին պատրանք նոցա։
Աւետիք բարեաց ուրախ[illegible]անեն զմարդ։
Օրէնքն ոչ ուսուցանեն զայդ։
Աղօթքն զմարդ հրեշտակ առնէ։
Բիբք աչացն զինքն ոչ տեսանէ։
Դէմք առակիս առ որովայնամոլս ակնարկէ։

Թէ որ բայ մը այլ և այլ դէմքէ տէր բայի առնէ, պէտք է որ բայը նախապատիւ դէմքին համաձայն դրուի. զոր օրինակ՝

Ես և Հայր իմ առ նա եկեսցուք
Ես և դու և ամենայն բաղմութիւնդ ա-

շակերտեսցուք Աստուածային գրոց ։

Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, յանդիմանեա զնա՛, յորժամ դու և նա միայն իցէք ։

Եւ ուրախ լիցիս դու և ուստր քո ։

Տէր բային երբեմն յայտնի չի դրուիր · զոր օրինակ՝

Պահեա զպատուիրանս ։

Մեռանիմք և ոչ զարհուրիմք ։

Ոչ ախորժեն զառաքինութիւն ։

Զյանցանս նախաստեղծ մարդոյն մահուամբ իւրով ջնջեաց ։

Երբեմն ալ բայը զօրութեամբ կը դըր-վի · զոր օրինակ՝

Զարիքն իմ մնացական ։

Այսօր 'ի կառս ։

Ժամանակ մահկանացուացս սուղ ։

Ես մարդ մահկանացու ։

## Յատկացուցիչ ։

Անուանի մը որին ըլլալը իմացընելու համար քովը սեռական բառ մը կը դրուի, որ կ'ըսուի Յատկացուցիչ · աւելի պարզ ըսեմ բառի մը վրայ ո՞րին, ի՞նչին, [illegible], [illegible] կը հարցընեմք, հարցման պատասխանը սեռական յատկացուցիչ կ'ըսուի · աս յատ-

կացուցիչ ըսուած բառը ըստ մեծի մասին յատկացեալ ըսուած անունէն գրաբարի մէջ յետադաս կը դրուի․ զոր օրինակ՝

Որ զբեռն ընկերին բառնայ ։
Զծանրութիւն աւուրն բառնամ։
Ի ժամ վարձուն անմասն եղանեմ։
Յանկութիւն արծաթասիրին ոչ յագի 'ի
 բազմութենէ ընչից ։
Կատարէ զօրէնսն Քրիստոսի ։
Քաղցր է քան զխորիսխ մեղու ։

Թէ որ յատկացուցիչը յատկացեալէն նախադաս դրուի, յատկացեալին նախդի- րը յատկացուցիչը կ'առնէ․ զոր օրինակ՝

ԶԱստուծոյ նախախնամութիւն և զմարդ-
 կան անձնիշխանութիւն բարձին հե-
 թանոսք ։
Բազմաժամանակեայ սովորութիւն ՝զբնու-
 թեան զօրութիւն առնու։
Ոչ առին 'ի միտ զմահուն դառնութիւն ։
Զերիտասարդութեան հասակն ընծայեա՛
 աստուածպաշտութեան ։
Զլուսոյն ճառագայթ ։
Կենացն լոյս ծագեաց ։
Փարատեցաւ մահուն ստուեր ։
Զկայենի և զՅուդայի անէծս ժառանգեաց ։
զՊայլոց գործ գործեն ։

Տայ զծննդեանն աւետիս ։

Երբ որ երկուքին մէջ ուրիշ մասն բանի մտնայ նէ, յատկացեալին նախդիրը յատկացուցիչին վրայ ալ կը դրուի. զոր օրինակ՝

Զմահու փարատեաց զերկիւղ ։
Խորշակ զպտուղս խահրէ զծառոց ։
Զվիշապին ջախջախեաց զգլուխ ։
Ոչ կամեցան զմարգարէիցն գիտել զբանսն ։
Զխաւարի բերէ արդարև զօրինակ ։
Զփառացն Աստուծոյ տեսին զհանդէս ։

Երբեմն շարադրութեան գեղեցկութեան և վայելչութեանը համար մէջը ուրիշ մասն բանի չի մտած նախդիրը կը կրկնուի. զոր օրինակ՝

Յովսէփ մեկնեաց զփարաւոնի զերազն ։
Զտունջեան և զգիշերոյ զանշուգութիւնս
արեգակն ծնանի ։

Յատկացեալ մը երկու կամ աւելի յետադաս յատկացուցիչ ունենայ նէ, իր նախդիրը էն ետքի յատկացուցիչին վրայ ալ կուտայ. զոր օրինակ՝

Անձայն ծառատունկք ոչ երբէք փոխեն
զգոյնս ծաղկանցն և զտերևոցն ։
Յիշեսցես զօր մահուն և զդատաստանին ։

Տայ զծննդեանն աւետիս ։

Երբ որ երկուքին մէջ ուրիշ մասն բա-նի մտնայ նէ, յատկացեալին նախդիրը յատ-կացուցիչին վրայ ալ կը դրուի· զոր օրինակ՝

Զմահու փարատեաց զերկիւղ ։
Խորշակ զպտուղս խահրէ զծառոց ։
Զվիշապին ջախջախեաց զգլուխ ։
Ոչ կամեցան զմարգարէից գիտել զբանսն ։
Զխաւարի բերէ արդարև զօրինակ ։
Զփառացն Աստուծոյ տեսին զհանդէս ։

Երբեմն չարագրութեան գեղեցկութեան և վայելչութեանը համար մէջը ուրիշ մասն բանի չի մտած նախդիրը կը կրկնուի· զոր օրինակ՝

Յովսէփ մեկնեաց զփարաւոնի զերազն ։
Զտունջեան և զգիշերոյ զանշուգութիւնս
արեգակն ծնանի ։

Յատկացեալ մը երկու կամ աւելի յե-տադաս յատկացուցիչ ունենայ նէ, իր նախ-դիրը էն ետքի յատկացուցիչին վրայ ալ կուտայ· զոր օրինակ՝

Ամենայն ծառատունկք ոչ երբէք փոխեն
զգոյնս ծաղկանցն և զտերևոցն ։
Յիշեսցես զօր մահուն և զդատաստանին ։

ղը՞. զոր օրինակ՝

Ա՛ռ հաց, գոհացաւ, եբեկ և ետ նոցա.
Ա՛ծ գօտի ընդ մէջ իւր.
Փայտ շատ յարուցանէ բոց մեծ.

Բայց թէ որ սեռի խնդիրը՝ յատուկ անուն, դերանուն, միջակ անուն,՝ յոդ, յատկացուցիչ ունեցող անուն ըլլայ նէ, անորոշ հայցական չըսվիր, միշտ հայցականնին զով կ'ըսուի. զոր օրինակ՝

Որ ետեսն զիս.
Եւ առին կապեցին զՅիսուս.
Ա՛ռնու զհացն և տայ նոցա.

Մի միջակ անունը երբեմն Աննախնդիր ալ կ'ըսուի. զոր օրինակ՝

Տեսանէք մի 'ի գաղանաց".
Արձակեաց առ նա մի 'ի յիշխանաց իւրոց.
Որ սիրեն զնա, սիրեսցին 'ի նմանէ.
Ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն.
Ծ՛առ խորարմատ 'ի հողմոց ոչ տապալի.
Խօսեցաւ 'ի նետից այլազգեաց.

Բնութենական խնդիր.

Բայերը իրենց բնութեանը յարմար կամ խօսքին պահանջելովը այլ և այլ հոլով կամ նախադրութեամբ խնդիր կրնան առնել, որ կ'ըսուին Բնութեան խնդիր.

զոր օրինակ՝

Ջերմութիւն արեգական ժողովէ 'ի գետոց
 և յաղբերաց ամպս անձրևաբերս ․
Սրբեսցուք զլեզուս մեր 'ի դատարկ բանից
 'ի բամբասանաց և 'ի ստախօսութենէ ․
Աղաչեմ զձեզ նախ քան զամենայն ։
Ողորմեա մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի
 ողորմութեան քում ։

Բայերը բնութեան խնդիր ամեն հոլովէ կրնան առնել ըսինք , բայց շատ անգամ թէ իրենց և թէ խնդրին վրայ մասնաւոր գիտելիք մը ըլլալով , բնութեան խնդիրը յատուկ հոլով կը դրուի ․ ինչպէս անուանական բայ ըսուած քանի մը բայեր կան , անուանել , համարել , կոչել , կարծել և այլն , որ բանի մը անուն տալ կամ ասանկ ըսել կ'իմացընեն ․ դրուած անունը կամ ըսուածը ինչ է նէ , ուղղական հոլով խնդիր պիտի ըլլայ ․ զոր օրինակ՝

Բժիշկք զչափաւոր կերակուրս մայր առող-
 ջութեան ասացին ։
Հոմերոս հայր անուանեցաւ ամենայն քեր-
Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ։ [Թողաց։
Անուն աշխարհիս մեր Հայք կոչի ։
Զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն ։
Որոյ անուն կոչի Յօհաննէս ։

Հարցական, զարմանական բայերը ինչ բանի որ զարնել կը նշանակեն, ան բառը նախդրիւ սեռական խնդիր կը դրուի. զոր օրինակ՝

Յետս յետս չոքան և զարկան զգետնի։

Զի մի՛ նման զքարի հարկանիցի։

Առուտուրի բայերուն քով գին ըլլալու բառը սեռական խնդիր կը դրուի. զոր օրինակ՝

Վաճառեցին զՅովսէփ քսան դահեկանի։

Գնեցի՞ն զագարակն զայն երեսուն արծաթոյ։

Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին.

Առին զերկիրն չորեքհարիւր սկեղ արծաթոյ։

Ան ժամանակի բառերը՝ որ ատենին շարունակութիւնը կ'իմացընեն, և ո՞րչափ ատեն, նէ՞ [illegible] [illegible] հարցման պատասխան ըլլալով, հայցական խնդիր կ'ըլլան. զոր օրինակ՝

Յոնան եղև 'ի փոր ձկանն զերիս տիւս և զերիս գիշերս։

Շրջեցաւ Յիսուս յաշխարհի զամս երեսուն։

Առ ջրհեղեղաւ զամս ողջոյն ապականեալ կայր երկիր։

Եղև անձրև զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։

Մերժեցաւ քուն յաչաց իմոց զգիշերս զայս։

Զքառասուն և զվեց ամ շինեցաւ տաճարն։

Սողոս եղև 'ի Դամասկոս աւուրս ինչ ։
Արար հարսանիս աւուրս չորեքտասան ։
Հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց ։
Զվեց օր արար տէր Աստուած զերկինս և զերկիր ։
Տեսին զգործս իմ զքառասուն ամ ։
Ծառայեաց ամս եօթն ։
Լուր եկաց աւուրս չորեքտասան ։

Ժամանակի բառք քանի օրուան, քանի տարուան հարցման պատասխան ըլլայ նէ, սեռական խնդիր կը դրուի · զոր օրինակ՝

Էր այրի ամաց ութսուն և չորից ։
Նոյ էր ամաց վեց հարիւրոց ։
Աղէքսանդր եռեսուն և երկուց ամաց եղեալ վախճանեցաւ ։

Ժամանակի բառը երբ, նէ՛ զէման հարցման պատասխան ըլլայ նէ, ներգոյական խնդիր կ'ըլլայ · զոր օրինակ՝

Մեռաւ Աբրահամ 'ի բարւոք ծերութեան ։
Ի գարնանային եղանակս զուարճանամք ։
Յեօթներորդ աւուր հանգեաւ Աստուած 'ի գործոց ։
Ի գալստեան տեառն բանին երկինք ։

Ժամանակի բառերը երբ որ անորոշ կերպով մը իմացընեն, պարառական խնդիր կ'ըլլան · զոր օրինակ՝

Յարեաւ Սամփսոն զմէջ գիշերաւ ։
Զինն ժամու գոչեաց Յիսուս 'ի ձայն մեծ ։
Յարեան կազմեցան 'ի չու զիններորդ ժամու գիշերոյն ։

Հայերէն լեզուի վայելչախօսութիւնը կը ներէ երբեմն մէկ հոլովը մէկալին տեղը դընել․ զոր օրինակ՝

Գործիականի տեղ Տրականի ։

Զքաղաքն յիւր անուն անուանէր ։
Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան ,

Ուղղականի տեղ Հայցականի ։

Դու զո՛վ առնես զքեզ ։

Ներգործական բայերուն ուղղական խնդիրը երբ որ յոքնակի ըլլայ, + գիրը ․ կը փոխուի․ բայց կրաւորական ու չէզոք բայերունը անփոփոխ կը մնայ․ զոր օրինակ՝
Կացո՛ զնոսա իշխանս ։
Եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս ։
Արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի ։
Որդիք Կայենի որդիք մարդկան ասացան ։
Կենդանիս արար զմեզ ։

Կան քանի մը բայեր, որ հայերէն լեզուի սովորութեամբ պարառական խնդիր

կ՚առնեն, երբեք չինշանակելով. զոր օրինակ՝

Որ անցանէ զպատուիրանաւ։
Այպանել զբանիւք։
Որ կատակէ զաղքատով։
Որ քամահէ զընչիւք։
Զնորա պատուիրանաւն գլացաք։
Նշկահէ զմեղօք։
Զանց արարին զիմաստութեամբ։
Մի՛ զգլորմամբ ընկերին ծիծաղեսցիս։
Մի՛ զյանցանօք մերովք զանց արասցուք։

Քանի մը բայեր կան, որ իրենց առաջին բայանուն խնդիր կ՚առնեն, սկսանիմ, կամիմ, կարեմ, երկուքին առածը սեռի խնդիր է. ու կարեմին առածը բնութեան խնդիր է. զոր օրինակ՝

Այս այր սկսաւ շինել, և ոչ կարաց կատարել։
Յիսուս սկսաւ լուանալ զոտս աշակերտացն.
Նա սկսան քարոզել զբանն Աստուծոյ։
Կարիցէ կոյր կուրի առաջնորդել։

### Էական Բայերուն Վրայ։

Աս չորս էականները որովհետև ըլլալ կը նշանակեն, իրենց բնութենէն կ՚ուզեն երկու բառ, մէկ մը եղող անձը, մէկ մ՚ալ

ան անձին ինչ եղածը․ անոր համար պէտք է, որ փնտռուի թէ խօսքը ո՛րի վրայ է, ու անոր ըսուի Տէր բայի, և միւս՝ անոր համար ինչ կ՚ըսուի, ու ան ալ ըսուի Ուղղական խնդիր, զոր օրինակ՝

Փափուկ և դիւրադարձ է լեզու։
Խոզ տղմասէր է և խառնակեր։
Սուղ է կենցաղս։
Աշխարհ Հայոց մեծ է և արգաւանդ։
Բանք քո բարի են և դիւրինք։
Զուարթացին են երեսք խոնարհին։
Երկայնութիւն նորա քսան ասպարէզ։
Ցանկալի և քաղցրաբան է խոնարհ։

Երբեմն ուղղական խնդիրը նախդրիւ տրական կը դրուի․ զոր օրինակ՝

Աբրահամ եղև յազգ մեծ։
Մովսէս յորդեգիրս եղև դստերն փարաւոնի։
Եղիցիք դուք մեզ ՚ի ծառայս։
Ես եղէց նոցա յԱստուած։
Նոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ։
Եղիցին դժուարինքն ՚ի դիւրինս։
Բարձրութիւն նորա ՚ի տասն կանգուն։

Նական բայերը խօսքին պահանջելովը ուրիշ հոլովալ խնդիր կրնան առնել մէկալ բայերուն պէս․ զոր օրինակ՝

Գանձիւք եղիցի փրկութիւն ձեր։

Ընդ է՞ր ինձ այդ,
Քեզ լեցի քոյդ։
Լեր դու ինձ յորդի,
Ամենայն ինչ նուէր եղև,
Ի մէնջ ես, եթէ 'ի թշնամեաց մերոց.
Ու ձեզէն բանք իմ.
Ի խորանի անդ է.
Ընդ նմա էի.
Գրաւն է 'ի սկսման առաքինութիւն,
Օչ է մեր Աստուած յերկինս.

Բայց երբ որ սեռական խնդիր առնենէ, նշանակութիւնը կը փոխուի, առնենալ կը նշանակէ. զոր օրինակ՝

Գողտայ էր ոչխար բազում.
Լուսնի չիք լոյս առանձինն.
Են իմ եղբարք հինգ.
Որ ինչ քո իցէ.

Երբեմն ալ գործ, պաշտօն, մուքէֆէն կը նշանակեն, զոր օրինակ՝

Ճշմարիտ վարդապետի է, երբեմն խրատել
երբեմն յանդիմանել.
Առատացուցանել զպտուղս անձրևաց է։
Խորշակին է կորուսանել զպտուղս.
Աչաց է տեսանել.
Ականջաց է լսել.

## Ընդ նախդրին վրայ :

Քանի մը բայեր կան, որ իրենց տրական խնդիր ընդ նախդիրով կ'ուզեն. զարմանալ, ափսոսալ, պարտիլ, նախանձիլ, ուրախանալ, և այլն, ու աշխարհաբար վրայ կը թարգմանուին. զոր օրինակ՝

Ծնողք ուրախանան ընդ յառաջադիմութիւն որդւոց :
Սնասասէրն խնդայ ընդ կուխ :
ԶԱստուած բարկացուցանեմք յորժամ ընդ բարիս այլոց տրտմիմք :
Մանկունք փոքունք ընդ ոչինչսն մեծապէս զարմանան :
Բազումք սքանչանային ընդ ճգնութիւն սրբոյն Անտոնի :

Երբ որ խօսքը տարածումն կը ցուցունէ, տարածուած տեղը ընդ նախդիրով ներգոյական խնդիր կ'ըլլայ բային. զոր օրինակ՝

Անուն Քրիստոսի փառաւորեցի ընդ ամենայն տիեզերս :
Եղև սով մեծ ընդ ամենայն երկիր :
Հրեայք ցրուեալ են ընդ ամենայն երկիր :
Ստամոքսն ընդունի զկերակուր, և բաժանէ զոյժ զօրութեանն ընդ յօդս և ընդ անդամս մարմնոյն :

Երբ որ բայը մէկ տեղաց մէկալ տեղ անցնիլ, երթալ, նշանակելու ըլլայ, հարկաւ անցնելու տեղը որ բառն՝ է նէ, ընդ նախդիրով տրական խնդիր կ՚ըլլայ բային, ու աշխարհաբար ծաց" կը թարգմանուի. զոր օրինակ՝

Մտէք ընդ նեղ դուռն՝:
Որ ինչ մտանէ ընդ բերան, ոչ պղծէ զմարդ:
Ընդ դրունս ածեմք 'ի տուն զամենայն գոյս:
Եւ ընդ նոյն դարձեալ արտաքս հանեմք:
Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել:
Եբրայեցիք ելեալ յԵգիպտոսէ անցին ընդ ծով Կարմիր:
Եմուտ քարն ընդ սաղաւարտն 'ի ճակատն:

Ածական անուանց վրայ:

Երբ որ հասարակ ածական անուն մը իր գոյականէն նախադաս է, պէտք է որ գոյականին ամէն հոլովին ինք եղակի ուղղական ըլլայ մինակ գոյականին նախդիրը վերան առնելով. զոր օրինակ՝

Անապական պսակացն արժանի եղեն:
Ուրախարար բաժակաւն զուարճացոյց զմեզ:
Լայնատարր հետովք խաբեցայ:
Ժամանակեայ վշտօքս զանժամանակեայ երանութիւնսն ժառանգեսցուք:

«Պայծառ լապտերօք մտանեն յուսադատն լուսոյ։

Ընանց և անպատում պարգևաց եղեն մատակարարք։

Միավանկ, երկվանկ ածականները նախադաս դրուին նէ, կը համաձայնին. զոր օրինակ՝

Սեղեկիոս հնազանդեցոյց զՊարթևս մեծաւ պատերազմաւ։

Կարճամիտք 'ի փոքունց վշտաց խորտակին։

Պապ Թագաւորն Հայոց դեղ մահու արբոյց սրբոյն Ներսիսի։

Երկիւղածութեամբ լուարուք սրբոյ աւետարանիս։

Կալայ զաջոյ ձեռանէ քումմէ։

Յետադաս ածականները թուով ու հոլովով միշտ համաձայն կ'ըլլան իրենց գոյականներուն. զոր օրինակ՝

Եջ վասն մարդկան մեղաւորաց և անարժանից։

Ստացաք նախատինս յարանց ստոց և անզգամաց։

Չեմք մարդատեացք իբրև զգազանս շաղղակերս և արիւնարբուս։

Ածականին ու գոյականին մէջտեղը ուրիշ մասն բանի մտնայ նէ, ածականը գոյականին հետ կը համաձայնի, նախդիրն ալ

կը կրկնուի · զոր օրինակ՝
Առաքելականացն աշակերտեցան բանից ։
Սպասաւոր աստուածայնոցն կարգեցաւ գան-
ձուց ։
Տէրունականաւն վարեսջի՛ր խրատու ։
Աներեւութից քննող գաղտնեաց ։
Հովիւ և անդէորդ զհովուականն հնչեցու-
ցանեն զնուագ ։
Աբէլ 'ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբօրէ ։

Գոյական մը քանի մը նախադաս ածա-
կան ունենայ եւ շաղկապով կապուած, նախ-
դիրը ամեն ածականին վրայ ալ կը դրուի ·
զոր օրինակ՝
Վասն մեղաց անկաք 'ի ցաւալից և 'ի բազ-
մածուփ կենցաղս ։
Բևեռօք միացան ոտք միածնին 'ի մեծ և 'ի
նոր տեսարանին ։
Տեսանե՞ս զծայրագոյն և զանհամեմատ խո-
նարհութիւնն ։
Ի բարիր և յազնուական ազգէ ես դու ։
Ի յիմար և յանխրատ խնդրող ծնանին կռիւք ։

Ածականները գոյականէն յետադաս են
շաղկապով կապուին նէ, նախդիրը էն ետքի
ածականին վրայ ալ կրկնելու է · զոր օրինակ՝
Աբրահամ եղև յազգ մեծ և 'ի բազում ։
Զայր զուարթ և զառատ սիրէ Աստուած ։

Ընկալաւ զկեանս տրտմական և զախտալից։
Զսահմանս հինս և զառաջինս փոխեմք։
Երթիցեն յազգ օտար և 'ի չար։

Միջոյ անուանց կամ զայական ածականաց խնդրառութեան վրայ։

Ածական անունները երբեմն իրենց գոյականը իրենց խնդիր կ'առնեն զատել մը նշանակելով. զոր օրինակ՝

Ո՜վ որք 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ։
Ո՜վ որք 'ի մահկանացուացս ունիցի կեանս
անտրտում։
Արձակեաց երկուս յաշակերտաց իւրոց։
Տէր մեր իբրև զմի մէնջ 'ի շրջէր ընդ մեզ։
Բազումք յաղքատաց և հաց իսկ ոչ ունին։
Մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։
Անմեղն 'ի ձէնջ ընկեսցէ քար 'ի վերայ դորա։
Առաջինն 'ի մարդկանէ 'ի դրախտէն արտա-
քըս անկաւ։

Ածականաց բաղդատութեանց խնդրառութեան վրայ։

Ածական անունները երբեմն տան նախդիրով հայցական խնդիր կ'առնեն, և բաղդատութիւն կը նշանակեն. զոր օրինակ՝

Հայր իմ մեծ է քան զիս։
Գլուխն պատուականագոյն է քան զամե-
նայն մասունս մարմնոյ։
Ցանկալի է քան զոսկի։
Ըհաւասիկ մեծ քան զՍողոմոն է աստ։
Հատն մանանխոյ փոքր է քան զամենայն
սերմանիս։
Գեղեցիկ ես քան զդստերս Երուսաղեմի։
Դառնագոյն քան զլեղի եղեն։
Վատթար ևս ես քան զշուն։
Չիք մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ։

Ածականը երբեմն քան նախդիրով խըն-դիրը բացառական կամ սեռական հոլով կ'առնէ. զոր օրինակ՝

Հին էր ժամանակաւ ՚ի նմանէ։
Ոչինչ նուազ էր կոյսն արքային հասակի։
Ցայլոցն վեհագոյն։
Ամենայն թագաւորացն մերոց հարստագոյն
և խոհեմագոյն էր։

### Միջակ անուանց վրայ։

Ածական անուանց համաձայնութեան վրայ ինչ որ խօսեցանք, նոյնպէս է միջակ անուանց համար ալ. որովհետև անոնք ալ ըստ մեծի մասին ածական են. բայց

իրենց մէջէն մէկ քանին իրենց համար համաձայնութեան տարբեր եղանակ մը ունենալով, զատ տեղեկութիւն ունենալ պէտք է։

## Իմ, Ինչ։

Ասոնք երկուքն ալ հոլով ունին, և ուզեն կը համաձայնին, չուզեն չեն համաձայնիր. սովորաբար գոյականէն ետև դընելու է, նախադաս դրուին նէ, իրենցմէ առաջ բառ մը կ՚ուզեն. յոքնակի թիւ չունենալով, յոքնակի գոյականի քով միշտ եզակի կը դրուին, յոքնակի բառի քով Ինչը քանի մը կը նշանակէ. զոր օրինակ՝

Աշխարհ իմն է բնութիւնս։
Ի բարերար արարչէն չար ինչ չիք եղեալ։
Ընծի իմն ցանկացար։
Ի ժամանակի իմիք։
Թաթառով իմն։
Յխատէ ինչ։
Ի շարժմանէ իմեքէ։
Եւ համեմատութիւն ինչ ոչ գոյ ՚ի նոսա։
Այլով իւիք տանջանօք հաւանեցուցանէ զնոսա։
Յետ աւուրց ինչ։
Յետ ժամուց ինչ։

### Իմն, Ինչ, Ոչ ։

Սոնք երբեմն զարդի տեղ աւելորդ կը գրուին . զոր օրինակ՝

Զպատճառ հարստութեանն մեք ինչ ոչ գի-
    տեմք ։

Վասն ողորմութեան իմոյ սիրեցի զքեզ և
    ոչ վասն քո ինչ ։

Ոչ ոք այն որ գոյր ։

Իբրև կամէին իմն ։

Տես դու, զի 'ի տանջանաց երկեայ ինչ ես ։

### Իւրաքանչիւր ։

Իր գոյականին հետ կը համաձայնի, բայց եզակի ուղղականը շատ տեղ յոգնակի սեռականի և տրականի տեղ կը վարուի · զոր օրինակ՝

Ողջոյն տուք սիրելեաց իմոց իւրաքանչիւր
    յանուանէ ։

Մեկնութիւն բանիցն իւրաքանչիւր ոչ գտաւ
    'ի բերան նորա ։

Իւրաքանչիւր գործոց հատուցմունք լինելոց է ·

Դրօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր
    'ի նմանէ ։

### Ոչ ։

Իր գոյականէն նախադաս կը դրուի,

*շատ անգամ համաձայն և երբեմն անհամաձայն. զոր օրինակ՝*
*Յո՛րմէ քաղաքէ ես, կամ յո՛րմէ ժողովրդենէ։*
*Յո՛ր քաղաք մտանիցէք, անդ ագջի՛ք։*
*Վասն որո՛յ գործոյ քարկոծ առնէք զիս։*

**Մի, Երկու, Երեք, Չորք, Երկոքեան, Ամենեքեան, Ոմն, Ոք։**

*Ասոնք իրենց գոյականէն նախադաս յետադաս կը համաձայնին, մանաւանդ նախդրիւ հոլովներուն. մինակ՝ երկուն յոգնակի ուղղականի քով երկու կ'ըսուի, երկուք չըսուիր. զոր օրինակ՝*
*Երկու որդիք էին նորա։ Եւ ոչ թէ Երկուք որդիք։*

**Ստացական դերանուանց վրայ։**

*Ստացական դերանունները իրենց գոյականներէն նախադաս յետադաս կը համաձայնին. զոր օրինակ՝*
*Զիա՞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից։*
*Ի տեառնէ քումմէ ընկալցիս դու զվարձս քո։*
*Երդմնեցուցանեմ զքեզ 'ի քոյին հաւատ միամիտ կալ 'ի ծառայութեան մերում։*

Հալածեցէք յաշխարհէդ ձերմէ։
Ընդէ՞ր տեսանեմք զարև յետ մերոց սի-
րելեացն։
Տէ՜ր 'ի տաճար սուրբ իւրում, տէր յեր-
կինս յաթոռ իւրում։

Այս, Այդ, Այն, ածական դերանուանց վրայ։

Ածական դերանունները նախադաս կը համաձայնին կարճ հոլովով, յետադաս կը համաձայնին երկան հոլովով, ու իր դիմորոշը կուտայ գոյականին, անոր նախդիրն ալ կը կրնէ իր վրայ. զոր օրինակ՝

Ապաշխարութիւն չէք յայնմ աշխարհի։
Ընդէր է կորուստ իւղոյդ այդորիկ։
Ի մեռելոց յառնելոց ես մարմնովդ այդուիկ։
Վաղուց էիր վախճանեալ 'ի տանջանացդ
յայդցանէ։
Ի լերինն յայնմիկ զամենայն գիշերս ագանէր։
Քան զգեհենն չար համարէի զայն հանգիստ։
Այսպէս ասէ տէր տէր ցոսկերսդ ցայդոսիկ։
Քաւեալ լիջի՛ր դու յերդմանէդ քումմէ
յայդմանէ։
Ընծայպէս գոհ էր զառնէն զայնմանէ։
Զնշանդ զայդ կրեմ 'ի պահպանութիւն ան-
ձին իմոյ։

Օ՛ ինչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ.

Յաւուրն յայնմիկ մատնեցայ 'ի ձեռս ահեղ հրապարակին։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելանէր Միհրան յորս։

Երբեմն ալ դերանունները չեն համաձայնիր. զոր օրինակ՝

Որքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր։
Տարերքս այս խառնեալ են.
Ես պատկառիմ 'ի բանէդ յայդ։
Ո՞չ սաստես առնդ այդ։
Սովորեալ են գայլքդ այդ.
Մի՛ մնասցէ ոգի իմ 'ի մարդկանդ յայդմիկ,

Աս դերանուններուն տեղը աստի. այտի, անտի. այսր, այդր, անդր. աստ, անդ մակբայները կը վարուին շատ հեղ. զոր օրինակ՝

Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք։
Յանկարծ ելանել 'ի մարմնոյ աստի.
Մտին առ Նոյ 'ի տապան անդր։

## Սոյն, Դոյն, Նոյն։

Ասոնք իրենց գոյականէն միշտ նախադաս կը դրուին, համաձայն կամ անհամաձայն. զոր օրինակ՝

Դարձեալ զնոյն նիւթեցի չարիս։

Ինքն ։

Ասիկայ շատ հեղ ուրիշ դերանուններու հետ կը վարուի, շատ հեղ ալ անուններու հետ. զոր օրինակ՝

Զայլս խրատեմ և ես ինքն անփորձ եմ։
Դու ինքն զմեզս մեր վերացոյց։
Եւ ինքն Յովհաննէս ունէր գօտի մաշկե-
ղէն ընդ մէջ իւր։

Գոյական դերանուններն ալ ածական կ'առնեն՝ թուով հոլովով միշտ համաձայն. զոր օրինակ՝

Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս։
Վրիպեցելոյս ինձ.
Զի զիս զանարժանս զգաստացուցես։

Յարաբերող Որ դերանուան վրայ։

Աս դերանունը յարաբերած բառը իր հետը մէկ տեղ նոյն խօսքին մէջ ունենալով, անոր հետ միշտ թուով ալ պէտք է որ համաձայնի. զոր օրինակ՝

Ամենայն նիւթոյ՝ որ մարմին է, ապականու-
թիւն հետևի։
Բարւոք է խոնարհութիւն յամենայն ժամ,
և յամենայն նեղութեանց ապրեցուցա-

նէ զայնոսիկ, որք մերձեննան առ նա ։

Ի գործոյն՝ զոր գործէ ոք, առնու զանուն ։

Սատանայ անուանի նա, որ բարւոյ հակառակ կայ ։

Զբեռն՝ զոր դու ոչ ես բառնալոց, էր վասըն հոգաս ։

Զի ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար, զճշմարտութիւն ։

Երբեմն հոլովով ալ կը համաձայնի․ զոր օրինակ՝

Հայեսցին 'ի նա, յոր խոցեցինն ։

Արար Աստուած զերկինս և զերկիր և ըզ զարդս զոր 'ի նոսա ։

Կերաւ 'ի պտղոյն, յորմէ անկարօտ էր ։

Բնակեա՛ դու յերկրիդ, յորում ասացի քեզ ։

Եւ զիս ջնջեա՛ 'ի դպրութենէն, յորմէ գրեցեր ։

Յարաբերող դերանունը երբեմն յատկացուցիչ ըլլալով, երբեմն ալ նախդիրի խնդիր, առաջ դրուելով նախդիրը կ'առնէ, կամ անոնց ալ կը կրկնուի․ զոր օրինակ՝

Զորոյ զանունն ասել քաղցր է ։

Զորոյ զդէմս առնու մարգարէն և ասէ ։

Զորոյ մեք գիտեմք զհայր և զմայր ։

Վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն ։

Գտանէք յաւանակ մի, յորոյ վերայ ոչ ոք
'ի մարդկանէ նստաւ:
Զորոյ զփորձ առին հեթանոսք՝

Ս. Գ. Ն. ընտրող յօդերուն վրայ:

Այս յօդերը բառերուն ծայրը դրուելով, երբեք տեսակ դերանուան միտք կրնան տալ, ու ասանկով բառին նշանակութիւնը կ'որոշեն կամ կը մասնաւորեն. զոր օրինակ՝
Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս:
Եւ օձն էր իմաստնագոյն:
Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի:
Կարծեցեր անօրէնդ 'ի մտի քում:
Սիրտս նանրախորհուրդ:
Զարթուցեալքս 'ի հանդստենէ քնոյ, ա-
հիւ և դողութեամբ կացցուք յաղօթս
առաջի նորա:
Քառասուն թիւդ 'ի հինգ ութից աւարտի:
Եթէ աշակերտ ես, վարդապետիս նմանլեր:
Ընկալ զփոքրս 'ի տկարէս:
Ծածկեա՛ զգլուխդ, զի խորշակ սաստիկ է
'ի լերինդ:

Բայանուան ձեւոյ:

Բայանունները բայի պէս գործողութիւն նշանակելով, բայի պէս տէր բայի սեռի և բնութեան խնդիր կ'առնեն, բայց տէրբային համաձայնելու հարկ մը չունին դիմաւոր բայ չըլլալնուն համար. և սովորաբար սեռական կ'առնեն տէր բային, երբեմն ալ ուղղական. զոր օրինակ՝

Բրուտի մալեալ զկակուղ կաւն ստեղծանէ անօթ:
Տեսեալ արդարոց ծիծաղեցան:
Ի մեռանիլ մարդոյ կորնչի գեղեցկութիւն երեսաց նորա:
Բոց պակասի 'ի պակասիլ փայտի:
Ի բազմանալ մարդկան աճեցին չարիքն:
Ի ծնանել Յիսուսի մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ:
Մտեալ Յովսէփ 'ի տունն.
Ձին զուլամբ երթեալ:
Պատերազմել ընկեր ընդ ընկերի իւրում.
Մեղաւորք ելով մեք:

Երբեմն ալ վերջահոլով կ'առնէ, զոր օրինակ՝

Ի գալն քեզ զհետ սրբոյն.
Ի կալ նմա յաղօթս եւտես տեսիլ:

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ։
Ընտրեաց զմեզ Աստուած լինել մեզ սուրբս ։

Առաջին բայանունը վերջահոլով կամ սեռական նախդիրի խնդիր ըլլայնէ, ուղղական կրնայ դրուիլ, զոր օրինակ՝

Ջուր ծովուն ըստ աճել լուսնոյ աճէ, և ըստ պակասելն պակասէ ։
Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ ։

Աշխարհիկ խօսքերու մէջ նստելուն պէս ելլելուն պէս զրուցուածները, գրաբառ ընդ նախդիրով առաջին բայանուն պիտի ըլլայ ներգոյական հոլով. զոր օրինակ՝

Ընդ բուսանելն չորացաւ ։
Ընդ ելանել Յիսուսի 'ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ։

Երկրորդ բայանունը անուն ըլլայնէ, ոչ մասնիկով ածական կ'ըլլայ, բայ վարվինէ, առաջին բայանուան գործիականովը կը թարգմանուի. զոր օրինակ՝

Որդի խրատեալ իմաստուն լիցի ։
Արեգակն ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զօդս խաւարեալս ։
Եւ շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ։
Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է ։

Շանս սպանելոյ մի քարինս արձակեսցես:
Զանդերձելոցն հասցուք բարութեանց:
Ընդ Սահան Արծրունի ընդմիջեալ զգուն-
դըն Պարսից դարձուցանէ ընդ դէմ
Վարդանայ:
Մոլորեալ մարդկան յԱստուծոյ զտարերս
աստուածս ասացին:

Երրորդ բայանունը անուն ըլլայնէ, ա-
ծական կ'ըլլայ. բայ ըլլայնէ, եւ բային հետ
մէկ տեղ կը վարուի. զոր օրինակ՝
Ի գալոց չարեացն ապրեսցուք:
Երբ և իցէ մեռանելոց եմք.
Ընդ ամենայն դատարկ բանի համարս
տալոց եմք:
Ամենքեան կալոց եմք առաջի ահեղ ատե-
նին Քրիստոսի:

Բայանունները իրենց կցորդը իրենցմէ
նախադաս առնեն նէ, նախդիրնին անոնց
վրայ կուտան. զոր օրինակ՝
Գովութեան արժանաւոր այն բժիշկն է,
որ զ'ի դրունս մահու հասեալ հիւանդն
դարձուցանէ:
Զուրն յորժամ զ'ի նա անկեալ նիւթն ծա-
խեսցէ, ինքն շիջեալ աներեւոյթ լինի:
Զառաքինութեամբ զարդարեալսն պարտ է
պատուոյ արժանիս համարել:

Քրիստոս իւրով անպարտական մահուամբն
 կենդանացոյց զմահու դատապարտեալքս ։
Արիութեանն է զօր 'ի խոհականէն ընտ-
 րեալն քաջապէս կատարել։

Բայահաղորդ անուանց վրայ ։

Ան անունները որ բայի նշանակութիւն կուտան, Բայահաղորդ կ'ըսուին. և իրենց բային տեսակը պահելով անուն բայէն զատ մէկալ խնդիրները կ'առնեն. ինչպէս ներգործականի նշանակութիւն տուողները սեռական երբեմն ալ հայցական սեռի խնդիր կ'առնեն. զոր օրինակ՝

Ախտացեալքն դժկամակ լինին յարբումն դե-
 ղոց օգտակարութեան ։
Հարց յանձն է խնամածութիւն տղայ ման-
 կանց ։
Սկիզբն ուսման դրոց աշխատութեամբ լինի ։
Յընթերցմանէ գրոց ոչ երբէք ձանձրանամ։
Արար Աստուած զերկիրս պտղաբեր 'ի սը-
 նունդս ծառայից իւրոց ։
Յետ վախճանին Յովսեփայ նեղէին Եգիպ-
 տացիքն զԻսրայէլ։
Ի շինուած քաղաքաց և 'ի գործս դաշտաց։
Օրհնութիւն Իսահակայ զՅակոբ և Յա-

կորայ զՅուդա՝ ոչ 'ի նոսա, այլ 'ի
թոռունս նոցա կատարեցաւ։
Պահեցէք զմիտս ձեր 'ի դատմանէ զընկերին։

Ող մասնիկով կամ ողի ուժ ունենալով ներգործական բայահաղորդներն ալ նոյնպէս սեռի խնդիր կ'առնեն. զոր օրինակ՝

Առաջի Աստուծոյ կեաս, որ քննող է սըրտից և խորհրդոց։
Լեր 'ի հարցմունս խոնարհամիտ և սիրող խաղաղութեան։
Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց։
Փակողն արքայութեան երկնից սուրբ առաքեալն Պետրոս Քրիստոսի խաչակցեցաւ։
Ձեռքն են գործունեայ գործոց։
Աստուած կանխագէտ է հանդերձելոց։
Միտքն են մարմնոյ և հոգւոյ կառավար։
Խորշակ թառամեցուցիչ է բուսոց և տնկոց։
Ոչ սիրողաց զեղբարս պատիժ խոստանայ։
Գոտիչք չարեաց։
Զծնողս անարգողք։
Հուր ծախիչ զխուխս մեղաց։
Դատապարտողք զՔրիստոս ոչ խոստովանողաց։

Արաւօրական բայի ուժ տուողները բա-

ցառական կամ սեռական սեռի խնդիր կ՚առ-նեն. զոր օրինակ՝

Ծնունդ տեառն մերոյ 'ի սրբոյ կուսէն:
Եղէգն շարժուն 'ի հողմոյ:
Կոխան յազգաց:
Կոխան ոտից:
Վերաւորք սրոյ
Ծննդեամբ կուսին:

Բնութեան խնդիրնին իրենց բայէն ան-տարբեր է. զոր օրինակ՝

Սուրբքն աղօթիւք զմահ խնդրէին, և ըզ լուծումն 'ի մարմնոյ.
Մահն ոչ այլ ինչ է, քան անջատումն հոգ-ւոյ 'ի մարմնոյ:
Անյայտ է ժամանակ ելից մերոց 'ի մարմ-նոյ աստի:
Զհոգւոյն հայհոյութիւն մի թողցի:
Արար Աստուած զարեգակն լուսատու տուն-ջեան:
Եղաք մտաւորք և սպասաւորք յանբանից:
Հեթանոսք արարածոց պաշտօնատարք եղեն:

### Ածականաց խնդրառութեան վրայ:

Ածականները, որ վրանին ան, ապ, դժ մասնիկներէն ունենալով պակասութիւն մը

կը նշանակեն, խնդիր կ՚առնեն բացառական, սեռական, գործիական հոլով. զոր օրինակ՝

Աստուած անհաս է մտաց։

Անճաշակ յերկնաւոր բարեաց։

Արարիչն ամենեցուն աներևոյթ է 'ի մարմնաւոր աչաց։

Նման, յարմար, մեծ նշանակութիւն ունեցող ածականները տրական խնդիր կրնան առնել. զոր օրինակ՝

Որպէս ոչ են նման երեսք երեսաց, նոյնպէս և ոչ սիրտք սրտից նման են։

Կարօտ հացի և ողորմութեան։

Լեզուն արժանի է մեծի զգուշութեան։

Մանուկն ոչ է ընդունակ չարեաց։

Դարձեալ վիրաւորեցաք 'ի չար թշնամւոյն կենաց մերոց։

Բնութիւնս մեր միմեանց կարօտ ստեղծաւ յարարչէն։

Ուրիշ կերպով ալ կրնան ածականները խնդիր առնել. զոր օրինակ՝

Արմաւենի բարձր է հասակաւ և քաղցր պտղով։

Ախորժելի է խնձոր տեսութեամբն և հոտով և ճաշակաւ։

Միով ակամբն կոյր։

Անդաստան մաքուր 'ի փշոց։

Երբեմն ածական անունները բայի վրայ

գրուելով մակբայ կը վարուին, որոնցմէ ոմանք. գէրը կամ չէ. մասնիկ ալ կրնան առնել. զոր օրինակ՝

Ղուկաս լուսաւորագոյն պատմէ զհանգամանս վերանալոյն Քրիստոսի։
Որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի։
Բազմապատիկս աշխատէին։
Մեծաձայն կարդացէք։

Ասոր հակառակ մակբայները երբեմն ածական կը վարուին գոյական անուանց քով. զոր օրինակ՝

Սիրտն է շտեմարան ամենայն բարւոք խորհրդոց։
Որդեբար սիրով զկամս հօրն կատարել։
Շինէ երկուս տունս մեծապէս ծախիւք։
Յանկարծակի շարժմունք զաշխարհս սասանեցին։
Եւ հաստատ 'ի բարւոք ծերութիւն հանգեաւ 'ի տէր։

### Բացայայտիչ.

Երբ գոյական անուն մը մասնաւորելու համար քովը ուրիշ գոյական մը կը դնենք, որ անոր ով ըլլալը կամ ինչ մտքով առնըւիլը բացայայտէ, որոշիչ գոյականին կ'ը-

սենք Բացայայտիչ, իր բացայայտելոյն հետ Թուով կը համաձայնի․ երբեմն ալ հոլովով․ զոր օրինակ՝

Աբրահամհայր ձեր ցանկացաւ ։

Այսօր բուսաւ յԱննայէ մորենին Մարիամ։

Մի թէ՞ դու մեծ իցես քան զհայր մեր Աբրահամ։

Ի բաց ընկեսցուք զերկմտութիւն զմայրն անհաւատութեան։

Ամենայն նիւթ 'ի չորից տարերաց է խառնեալ 'ի հողոյ, 'ի ջրոյ, 'ի հրոյ և յօդոյ։

Տեղերուն յատուկ անունը բացայայտիչ ըլլայ նէ, ածական անուանց համաձայնութեանը համեմատ կը վարուի․ զոր օրինակ՝

Ջուրն Յորդանան գետոյ երիցս անգամ բաժանեցաւ։

Մովսիսական օրէնքն 'ի Սինա լեռնէն տուաւ ։

Ի ծովանալ Նեղոս գետոյ։

Մարդոց անունը նախադաս ալ կը համաձայնի․ զոր օրինակ՝

Տիմոթեայ որդւոյ սիրելոյ։

Ըն Գաղիոնաւ փոխանակաւ բդեշխին․

ՅԱղեքսանդրեայ արքայէ։

Յատուկ անունները երբեմն անուն բառին հետ մէկ տեղ բացայայտիչ կ'ըլլան․ զոր օրինակ՝

Ընցանէր ընդ մեծ գետն Կուր անուն ։
Տայ զՏիգրան ցպատանի ոմն Վարաժ ա-
նուն ։
Նտես այր մի Մատթէոս անուն ։

## ՎԱԽՃԱՆ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԵԱՆՍ



2839
2013

